№ 232 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1915
ԳԱՌԱՍՈՒՆՉՈՐԲՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՀՈԿՏԵՄ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».
Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԽԱԹԱԲԱԼԻՍՏՆԵՐ, կարդացէք այսօր № 37 և շաբաթ օրը № 38

„ԽԱԹԱԲԱԼ“

Ցրիչները թերթը ստանում են խմբագրատան գրասենեակում, Դվորցովայա փող. № 5, առ. Ժամը 12-ին։ 754. 1—1

Հայ Դրամա-Օպերետային Առաջին Դերասանական Ընկ.
ԹԻՖԼԻՍ, ԳԱՆՁԱԿ, ԲԱԳՈՒ, ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼ, ԵՐԵՒԱՆ, ԱՐՄԱՒԻՐ, ԱԽԱԼՑԽԱ, ՆԱԽԻՋԵՒԱՆ ԵՒ ԱՅԼՆ։
ԽՄԲԻ ԿԱԶՄԸ—օր. Աստղիկ, տ. տ. Սարգարեան, Սիրուշ, Սոֆիկ, Սոֆի-Վարդիթեր, Ֆլորա, պ. պ. Ալլահվերդեան, Բաղդասարեան, Թորոսեան, Ղազարեան, Յարութիւնեան, Փիրումեան, Շամիրեան։
Գլխաւորներ Տ. ՅԱԿՈԲԵԱՆ, ԽՈՋԱՄԻՐԵԱՆ, ՆԱԶԱՐԵԱՆ, և Վարշավայի օպերային երգիչ Ա. Ա. ՂԱՐԱԳՈՀԶԵԱՆ
Քառաձայն երգեցիկ խումբ ղեկավարութեամբ պ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ, ասիական և հայկական պարողների խումբ ղեկավարութեամբ պ. պ. ԴԻԱՍԱՄԻՋԷԻ և ԳԷՈՐԳԵԱՆԻ։
ԱՍԻԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԼՈՒՄԲ.—(Թառ, քեմանչա, սանթուր, ջութակ, ֆլէյտ, զավլ և այլն) ղեկավարութեամբ թառիստ ՍԱՄՍՈՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ և մասնակցութեամբ յայտնի թառ և քեմանչա նուագողներ՝ ԲԱԼԱՑԻ, ԳԷՈՐԳԻ, ՌՈՒԲԷՆԻ և այլոց։
Բեպերտուար՝ հայկական ինքնուրոյն և փոխադրական—«Զուլումի աշխարհից», «Գաբօյի ընտանիքը», «Սխալ հաշիւ», «Բաշօ», «Մի էջի մարդ», «Բարեկենդան», «Պառաւներին խրատ», «Էս էլ քի մօցիքլութին», «Օսկան Պետրովիչը դժոխքում», «Փեսայ օրսաղներ», «Վերադարձ», «Սօս և Վարդիթեր»։
Թարգմանական՝—«Ասլի-Քեռամ», «Աշըղ-Ղարիբ», «Քեօր-օղլի», «Սա չը լինի, նա լինի», «Արշին մալ-ալան», «Ցիսնամեայ պատանի», «Մարդ և կին», «Դեղեցիկ Հելլինէի փնտռողներ», «Բայզուշ», «Խանում», «Մարիէտտա», «Իտալացոց հետ մի երեկոյթ», «Թելաւեցի Օթելլո» և այլն։
Բարդ պիէսների օրկէստրովկա ԴՐ. ՄԻՐԶԱՅԵԱՆԻ
Կուպլետներ պիէսներում—օրվայ չարիքներից—օր. Աստղիկ, Սոֆի-Վարդիթեր, պ. պ. Ղազարեան և Փիրումեան։
Բացի օպերետներից խումբը ներկայացնելու է նաև թարգմանական և ինքնուրոյն ուրախ կոմեդիաներ և թեթև դրամաներ։
Խումբը ամբողջ կազմով չէ խնայում և իր օգնութիւնը բարեգործական հիմնարկութիւններին առանձին համաձայնութեամբ։
Սեփական զգեստներ, կեղծամեր և բեկելիզներ։
Ընդունվում են սիրող դերասանուհիներ և նուագողներ։
Խմբի լիազօրներ՝ պ. պ. Թորոսեան, Ղազարեան և Փիրումեան։
Վարչութիւն՝ Ա. Թումանեան, Գիգիլեան և իշխ. Թարխանեան։
առ. 753. 1—1 Դիրիժոր՝ Ս. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
(Կսենիեվսկայա, 8)
Բաց է ամենայն օր՝ 1—3 ժ. և 4½—6½ ժ.։ Կիրակի և տօն օրերը՝ 10—12 ժ.։
(չ.) առ. 748. 2—2

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՕՐԱՏՈՐԻԱ
ԿԷՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Նամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լեմմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—53

Թեորիճի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՅՈՒՐԵՐԳՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՈՏՈՐԱԿՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լաւագոյնս լուսաւորված ԹՆՆՁԴԻՆՆԵՐՈՎ ԶԱՆԱՑԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ԶԳԱՑՈՐՆԵՐԻՆ առ ժ. 9—10 ԶՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29։
առ. (ա. օ.) 504. 100—67

Թիֆլիսի կոյրերի հոգաբարձութեան ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՈՅԵԱՆ
ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիէվսկայա փող. № 1. Տելեֆոն № 16—67։
առ. 753. 50—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ նեարիեն, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (ստացիոնարն) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 1—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ե. Ե. Վեսելովսկի
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Եսվիցկիյ
Գ. Ե. Տէր-Ներսէսեան
Ա. Ռ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(չ.ա.կ.) առ 742. 100—2

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19 հոկտեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան ռազմաճակատ։ Հոկտ. 17-ին ամբողջ զօրաճակատի վրա, սկսած Սև-Ծովից մինչև Մանազկերտի հիւսիսային շրջանը, ընդհարումներ էին առաջապահ զօրախմբերի միջև, որոնք ուեղի տաք բնոյթ ունէին Սև-Ծովի ափային շրջանում, ուր թիւրքերը երկու անգամ փորձեցին ցրել մեր պահակ զինուորամասերին, բայց իրանք վանվեցին։

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19 հոկտեմբերի

ԿՐԱՎԻՎՈ.—«Պրէսս-Բիւրօն» յայտնում է. Ցամաք կռիւներ շարունակվում են նախկին զօրագծերի եռանում։ Պիրօտը պաշտպանող զօրքը ետ քաշեց իր երկու զօրաթեները այդ քաղաքից դուրս Թշնամուն, խոշոր օյժերով յարձակումներ գործելուց յետոյ, աջողվեց գրաւել Կաչանի լեռնանցքը։

Հիւսիս-արևմտեան զօրաճակատի վրա թշնամին, օգտվելով իր թւական գերակշռութեամբ, ետ մղեց սերբ զօրքերին մի քանի կիլոմետր Սվիլենացի մօտից։ Թշնամու զօրաշարքերում նկատվել են բաւական և աւստրիական ալպիական զօրամասեր։

Բելգրադը պաշտպանող զօրքերը վանեցին թշնամու բոլոր յարձակումները։

ՊԱՐԻԶ.—Հոկտ. 16-ին ցերեկով Կրիվոլակի շրջանում հանգիստ էր։ Բօբրօվոյից դէպի հիւսիս տեղի էին ունենում ընդհարումներ պահակախմբերի միջև և թնդանօթաձգութիւն ընդմիջումներով։ Կրիվոլակում լսելի էր թնդանօթաձգութեան ձայն Վելէսի կողմից։

Զէրնօզօրական հաղորդագրութիւն հոկտ. 16-ից. «Շնորհիւ նոր եկած մեծաթիւ զօրամասերի, թշնամուն աջողվեց նոցից պրաւել այն լեռան մօտի դիրքերը, օր մենք ձեռք ձգեցինք հոկտ. 14-ին։ Մենք նահանջեցինք դէպի մի այլ կէտ, պատճառելով կորուստներ թշնամուն։ Դրինայի շրջանում շարունակվում է երկուստեք ուժեղ թնդանօթաձգութիւն։ Մնացած զօրաճակատի վրա հրացանաձգութիւն էր»։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19 հոկտեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Հոկտ. 18-ին Կանգէր լճից դէպի հիւսիս (Շլօկից դէպի հիւսիս-արևմուտք) գերմանացիք փորձեցին առաջանալ, բայց անաջող։

Ռիգայի զօրաճակատի վրա ընդհարումներից մինի ժամանակ առիթ ունեցան ցոյց տալ իրանց քաջութիւնը լատիշ երիտասարդ-զինուորները։

Եակօբշտատի շրջանի զօրաճակատի վրա բաւական տաք հրացանաձգութիւն ու թնդանօթաձգութիւն է։

Դվինսկի շրջանի ռազմաճակատի վրա առաջվայ նման երկուստեք հրաձգութիւն է։

Գօրբունովկայի շրջանում գերմանական զօրամասերը փորձեցին առաջանալ։

Լոյս հոկտ. 18-ի գիշերը հակառակորդը առաջխաղացման ձեռնարկեց Գուտա Լիսովսկայայի շրջանում Զարտորիյսկից դէպի հիւսիս-արևմուտք։ Միաժամանակ սկսվեց տաք կռիւ Բուդնի շրջանում։ Մեր զօրքերը վանեցին բոլոր յարձակումները, որոնք չափազանց յամառ ու վճռական էին։ Յետոյ մեր զօրքերը գործեցին հակայարձակումներ, որոնց ժամանակ գերեցին 7 օֆիցէր և 400 զինուոր աւստրիացի։

Կօմարովօ գիւղի արևմտեան կողմում մենք սուրիներով վանեցինք թշնամուն խրամատներից, որոնց համար և մղվում էր կռիւը։

Գալիցիայում Պոկրօեպիլնա գիւղի մօտ՝ Ստրիպի շրջանում, ոչ հեռու Տարնօպոլից, լոյս հոկտ. 18-ի գիշերը մենք մթութեան մէջ դրաւեցինք թշնամու խրամատների մի մասը։ Հակառակորդը խկոյն դիմեց հակայարձակման, բայց վանվեց։ Կատաղի սուրնային կռից յետոյ մեր զօրքերը տիրեցին Սէմիկօվցէ գիւղին։ Գիւղը պաշտպանող գերմանացիների մեծ մասը սրի քաշվեց, մնացածները գերի ընկան։

Բալտիկ ծովում մեր ականանաւերից մինը բռնեց Ռիգայի ծոցում գերմանական մի հիդրօպլան. օդաձգանները գերի ընկան։

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են. Հոկտ. 16-ի առաւօտեան Սատիկօ հովում թշնամու զօրամասերը, ձեռնարկելով թէ լաւ անձնատուր են լինում, փորձեցին մօտենալ մեր դիրքերին Տօրրա լեռնային գետակի մօտ, բայց ապարդիւն։ Ներկատելով խարեբայութիւնը, մեր զօրքերը բացին կատաղի կրակ, օրից թշնամին լիակատար պարտութիւն կրեց, թողնելով կրուի տեղում 200 դիակ և 49 գերի. բացի դրանից մենք ձեռք ձգեցինք 100 հրացան և մեծ քանակութեամբ ռազմամթերք։

Ռիէնցա հովտի վերին մասում թշնամին հոկտ. 17-ին խոշոր օյժերով յարձակում գործեց Սեկատենշտէյնի դիրքի վրա. յամառ դիմադրութիւնից յետոյ մեր զօրքերը ստիպված եղան ետ քաշվել։ Հետևեալ առաւօտը, սառնալով օգնութիւն, մեր զօրքերը ցրեցին թշնամուն և հատատ ամրացան նոր դիրքի մէջ։

Իզոնցո գետի զօրաճակատի վրա երէկ տեղի էր ունենում ուժեղ թնդանօթաձգութիւն. բացի դրանից երկու կողմից էլ եղան մի քանի յարձակումներ։ Սանտա Մարիա գագաթի վրա մեր զօրքերը գրաւեցին թշնամու մի խրամատ, գերելով 15 հոգի։ Լերան ստորոտում թշնամին փորձեց երկու անգամ յարձակվել մեզ վրա, բայց ընկնելով մեր խաչաձև կրակի տակ, նա ստիպված եղաւ ետ քաշվել, թողնելով կուրի դաշտում մեծ թւով սպանվածներ։

Հոկտ. 16-ին մեր աէրոպլանները վերսկսեցին իրանց աջող գործունէութիւնը Կարսոյում։

ՊԱՐԻԶ.—Լոմբարդիւդէ շրջանում տեղի ունեցած յամառ թնդանօթային կռիւների ժամանակ մեր հրետանիները աւերեցին մի քանի դիրքեր։ Թնդանօթաձգութիւնը շարունակվեց Սուշէից դէպի հիւսիս-արևելք, մանաւանդ Բուլանդալ անտառի մօտ։

Նէվիլ-Սէն-Վաստից դէպի հիւսիս-արևելք շարունակվեց չափազանց յամառ կռիւ այն խրամատների համար, որոնց մէջ երէկ թշնամուն աջողվեց ամրանալ։ Մենք խլեցինք նրանց մի մասը։

Շամպանիում գերմանացիք ուժեղ թընդանօթաձգութիւնից և խեղդող գազեր գործադրելուց յետոյ վերսկսեցին իրանց յարձակումները Մէնիլից դէպի հիւսիս գտնվող շրջանում. օրվայ ընթացքում նրանք 4 անգամ յարձակման դիմեցին Տագիւրի և Լակուրտինի մօտ։ Սակայն ամենուրեք մեր հրաձգութիւնը կանգնեցրեց թշնամուն և ստիպեց նրան ետ քաշվել անկարգ՝ դէպի իր սկզբնական խրամատները։ Գերմանացիների կորուստները չափազանց խոշոր են։

Վոգէզներում տեղի էին ունենում շատ յամառ թնդանօթային կռիւներ Բան-դէ-Սապտ շրջանում։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
19 հոկտեմբերի

ՍՏՕԿՀՕԼՄ.— Բրիտանական կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնեց թոյլատրել, օրպէսզի մերձակայ ամիսների ընթացքում 130,000 տօն անտրաֆիկ ներմուծվի Շվէդիա։

Ստօկհօլմի «Դագէնսիդէր», դանիական «Պոլիտիկէն» և նորվէգիական «Տիդէնտէգն» լրագիրների խմբագրութիւնները միասին հիմնում են յատուկ հեռագիր Լօնդոնից, Պարիզից, Բերլինից և յետագայում նաև Պետրոգրադից, օրպէսզի ճշգրիտ տեղեկութիւններ առնեն համապատասխան երկրներում, մանաւանդ Բալկաններում կատարվող ընթացիկ դէպքերի մասին։

ԼՕՆԴՕՆ.—Ստանձնելով արտաքին գործերի մինիստրութեան կառավարութիւնը, Բրիանը սրը Էդվարդ Գրէյին հեռագիր ուղարկեց, որի մէջ ասում է, թէ Ֆրանսիան առաջվայ նման մատղիր է սերտ, ակտիվ համերաշխ քաղաքականութիւն վարել Մեծ-Բրիտանիայի հետ, մի քաղաքականութիւն, որ այնպէս բաղդաւոր կերպով միացնում է Անգլիային և Ֆրանսիային միմիանց հետ ընդհանուր կռիւ հէնց սկզբից։

Գրէյը պատասխանեց, որ ուրախ է օգտվելու առիթից՝ երկրորդելու մեծ-բրիտանական կառավարութեան վճիռը—անյողդող համերաշխարար կռիւը հասցնելու Ֆրանսիայի հետ մինչ իր բարեաջող վախճանը։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Ֆրանսիական մինիստրնախագահ և արտաքին գործերի մինիստր Բրիանը և Սազոնովը փոխանակեցին շնորհաւորական հեռագիրներ։ Այդ հեռագիրների մէջ ընդգծվում է, որ դաշնակից պետութիւններին կապակցող սերտ միացումը աւելի է ամրանդվում, և հաւատ է արտայայտվում՝ թէ երկու երկրների քաղաքական գործակցութիւնը արդիւնաւէտ կը լինի։

ԿԱՀԻՐԷ.—Հոկտեմբերի 16-ին տեղական յունական գաղութը յունաց կառավարութեանը հեռագիր ուղարկեց, համաձայն հետևեալ իսկական ազգային շահերի քաղաքականութեան և յարել դաշնակիցներին՝ ի պաշտպանութիւն քաջարի սերբ ժողովրդի։ Ալէքսանդրիայի յոյն գաղութը միացաւ այդ հեռագրին։

ԼՕՆԴՕՆ.—«Թայմսի» ասելով, գեներալիսիմուս Ժոֆֆրի այցելութիւնը Լօնդոն յանդեց այն բանին, որ լիակատար ու վերջնական համաձայնութիւն կայացաւ՝ Բալկաններում ռազմի գործողութիւններ ունենալու վերաբերմամբ։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Ներքին գործերի մինիստրութիւնը իրաւունք տուեց այն փախստականներին, որոնք դրամ են ստացում Ամերիկայից, յայտարարութիւն ներկայացնել դրամը վճարելու մասին փախստականներին խնամող կազմակերպութիւններին ըստ ընակութեան տեղի։

Պետական Դումային ներկայացվեց Պետական վերահսկչի հաշիւը 1914 թ. նախահաշուի եկամտի մասին։ Համաձայն հաշուեկշռի, ընդամենը սովորական ու արտակարգ եկամուտները ըստ նախահաշուի նշանակված էին 3,585,569 473 բուբլի, իսկ ստացվեց 4,501,693,757 բուբ. սովորական ու արտակարգ ծախսերը նշանակված էին 3,613,569,398 բուբլի, իսկ ծախսվեց և պէտք է վճարվեն 5,743,529,235 բուբլի. եկամտի յաւելումը կազմվեց՝ պետական գանձատան կարճ ժամանակեայ պարտաթղթերի դիմաց ստացված 886,736,798 բուբլուց, 441,790,669 բ. ներքին 5%-ային փոխառութիւնից և 266,820,550 բ. պետական գանձատան 4%-ին տոմսերից։

ՕԴԵՍՍԱ.—Եկաւ Ֆրանսիական միսիան գեներալ դ-Ամատի գլխաւորութեամբ։ Այսօր միսիան մեկնում է արտասահման։

ԱՆԳԼԻԱՅԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՅԼԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԷՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19 հոկտեմբերի

ԹԷՀՐԱՆ.—Կայսերական կառավարութեան յանձնարարութեամբ ռուսաց դեսպանը տեղեկացրեց շահի կառավարութեանը, որ եթէ ճշդվեն այն լուրերը, թէ Պարսկաստանը առանձին համաձայնութիւն է կապել Գերմանիայի և Թիւրքիայի հետ, այն ժամանակ անգլո-ռուսական պայմանագիրը, որ հիմնված է պարսից պետութեան անձեռնմխելիութիւնը ու ամբողջութիւնը պահպանելու սկզբունքի վրա, կը կորցնէ իր ոյժը։

Միևնոյն լուրերի առիթով մեծ-բրիտանական դեսպանը Լօնդոնի կաբինէտի յանձնարարութեամբ յանձնեց պարսից արտաքին գործերի մինիստրին մի վերջնագիր, որ մատնանշում է՝ թէ անհրաժեշտութեան դէպքում անգլիական կառավարութիւնը ձեռք կառնէ հարկաւոր միջոցներ՝ Պարսկաստանում գտնվող մեծ-բրիտանական հպատակներին և ներկայացուցիչներին պաշտպանելու համար, ըստ որում հետևանքների բովանդակ պատասխանատուութիւնը կընկնէ շահի կառավարութեան վրա։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

✦ «Б. В.»-ին Աթէնքից հեռագրում են, որ Դարդանէլի մօտ կռիւները կօրցրել են իրանց նախկին ոյժը։ Այժմ այնտեղ տեղի են ունենում միայն մանր ընդհարումներ և թնդանօթաձգութիւն։

✦ «Б. В.»-ին հաղորդում են, որ Սալոնիկում ֆրանսիացիք կառուցել են աէրոդրոմ, որտեղից թռիչքներ են կատարում աէրոպլաններով ֆրանսիացի օդաձիգները։

✦ «Р. В.»-ն հաղորդում է, որ սերբական պալատը պատրաստվում է փոխադրվել Մոնաստիր։

✦ «В. В.»-ին հեռագրում են Կոպէնհագէնից. «Բերլինում չը տեսնված սառնամանիքներ են։ Ցուրտը 15 աստիճանի է հասնում, մինչդեռ 200 տարիների ընթացքում այս ժամանակ ամենացածը չերմութիւնը 5 աստիճան է եղել»։

✦ Ֆրանսիական զօրքերը Գալիպոլի թերակղզուց մեկնում են Սալոնիկ։

✦ Բէլգաւսովը հեռագրում է «Р. В.»-ին Պարիզից. «Ֆրանսիական կաբինէտի վերակազմութեան առիթով Էրվէն գրում է «Guerre Sociale» լրագրում, թէ Իտալիան, ըստ երևոյթին, մտադիր չէ զօրք ուղարկել Բալկաններ։ Ուրեմն մնում է անգլո-ֆրանսիական զօրաճակատը, որտեղից կարելի է արագ պատրաստի զօրք վերցնել և ուղարկել սերբերին օգնելու։ Բայց հնարաւոր է արդեօք թուլացնել ֆրանսո-գերմանական զօրքերին Արևելքում,—ահա թէ ինչումն է ամբողջ հարցը»։

✦ Վերջին պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ սերբ զօրքերի դիրքերը յուսահատական ու կրիտիկական է։

[illegible] գրում են, որ Ֆրանսիայ[illegible] Սարուշիցան, մտել են բոլգարական երկիր 32 կիլոմետր տարածութեամբ։ Բոլգար զինուորները և ազգաբնակութեան մէջ սարսափ է ընկել։

◆ Ալբանական հրասակախմբերը նեռս են խուժել Սերբիա և գրաւել են մի քանի կէտեր սահմանին մօտ։

◆ Բուխարէստի «Advurul»-ը յամառ կերպով պնդում է, որ Աթէնքում ընկվել է յեղափոխութիւն։

◆ Բուլգարական սահմանում գտնվող բոլգար զօրքերի մեծ մասը ուղարկվել է Դէդէագաչ։

◆ Գերմանական մամուլը հաւատացնում է, որ Յունաստանը դաշնակիցներից պահանջել է դադարեցնել զօրքեր ուղարկելը Սօլուն և եւ կանչել ուղարկվածներին։ Այս տեղեկութեան հակառակ՝ յայտնում են, որ շուտով Զախիսին փոխարինելու է դարձեալ Վէնիզէլօսը։

◆ Բերլինում բացաւ հիւանդութեան պատճառով կրթական հաստատութիւնները փակ են։

◆ Կոպէնհագէնից հաղորդում են, որ Սոֆիայում երեան է հանվել դաւադրութիւն Ֆէրդինանդ արքայի դէմ. կալանաւորված են մի քանի օֆիցէր և քաղաքական գործիչներ։

◆ «Մ. և Ա.» կոմիտէի արտակարգ նիստում, որին թոյլ չը տուին մասնակցել գերմանացիներին, երիտասարդ-Թիւրքերը հարց են դրել, թէ ինչ պատասխան տալ, եթէ գերմանական զօրքը երևայ Կ. Պոլսում։ Մաքերի փոխանակութիւնից յետոյ հրատարակվեց այն յայտնի դեկլարացիան, թէ Թիւրքիան կարիք չունի Գերմանիայի օգնութեան և թոյլտու է Դարդանէլը իրան և ինքը կը նուաճէ Եգիպտոսը։

◆ Բուլգարիան յայտնել է Յունաստանին, որ եթէ նա սաիպէ սերբերին նահանջել դէպի յունական երկիրը, նա այլևս հաշուի չի առնի նրա չեզոքութիւնը։

◆ Աթէնքում հաւատացած են, որ Բուլգարիան հանդէս կը գայ յոգուտ քառեակ համաձայնութեան։

◆ Ճշդվում է այն տեղեկութիւնը, թէ Ֆրանսիացիք գրաւել են Սարուշիցան։ Հիւսիսային Սերբիան գերմանացիների ձեռքումն է։ Ֆրանսիական զօրքերը դիմում են դէպի Իշտիբ։

◆ Զինուորական մասնագէտները գտնում են, որ բուլգարական և գերմանական զօրքերի միացման տեղում ճանապարհները շատ վատ են, այնպէս որ դեռ Սերբիայի դրութիւնը չի կարելի յուսահատական համարել։ Անգլիական զօրքերն արդէն միացել են Ֆրանսերբիական զօրքերին և հաւանօրէն առաջիկայում կը սկսվեն վճռական գործողութիւններ։ Մինչ այդ՝ սերբերը պաշտպանվում են առիւծի նման. այժմ նրանց զօրաքանակը 400 վերստից դարձել է 200 վերստ։

◆ Ռուս-գերմանական ռազմաբեմում, զինուորականների կարծիքով, դրութիւնը դառնում է նպաստաւոր ռուսների համար։ Տեղական անպատաս պայմանները մեծ արգելք են ներկայացնում գերմանական զօրքերին։ Դվինսկի շրջանում թշնամին աւարտած չէ համարում իր գործը։

◆ Կ. Պոլիսը իրանից ներկայացնում է հիւանդանոց։ Բժիշկների մեծ կարիք կայ։ Հրդեհները սաստկացել են։

◆ Բուլգարական պաշտօնական թերթը ցրում է այն պատրանքները, թէ պատերազմը կը վերջանայ շուտով։

◆ Աթէնքից հեռագրում են, որ մեծ ճակատամարտ է սպասվում Սարուշիցայի մօտ։

◆ Մոսկվայի երկաթուղային կայարաններում դատարկել են 2000 վագոն։

◆ Շուտով նոր կանոններ են հրատարակվելու զինուորական գրաքննիչների համար։

◆ Լոնդոնի գերմանական նախկին դեսպան Վոլֆ-Մետերնիխը նշանակվելու է արտակարգ դեսպան Կ. Պոլսում։

◆ «Բ. Բ.»-ին հեռագրում են Աթէնքից, որ Թիւրքերը երկու ամբողջ լաւ պատրաստված զօրաքանակ են ուղարկելու Բուլգարիա՝ բուլգարական ափերը պաշտպանելու համար։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԴԵՐԸ

(Յառաջ „Թայմի“ 8 հոկտ.)

VI

Գլխաւորների վիճակը

Այն քաղաքականութիւնը, որ Կոմիտէին կորցնել տուեց Մակեդոնիան և որ այնչափ հին է որչափ «Ծարքուին Թագաւորը», այժմ նորոգել է Թալէաթ բէյը։ Ճիշդ այնպէս ինչպէս Մակեդոնիայում յոյն և բուլգար գլխաւորները նախ ներման և շնորհների արժանանալուց յետոյ Կոմիտէի դաւին զոհ գնացին, այդպէս էլ հիմա այն հայերը, որ կատարեալ հաւատարմութեամբ աջակցեցին Թիւրք յեղափոխականներին, առաջինն եղան՝ Թալէաթի ձեռքի ծանրութիւնը զգալու։

Հալաճեան էֆէնդի, նախկին մինիստր հաղորդակցութեան ճանապարհների, ձերբակալվեց Կ. Պոլսում, իբր թէ մի հայկական գաղտնի դաւի բացվելու հիման վրա։ Զը նայելով իր բարեկամական յարաբերութիւններին Կոմիտէի հետ, որին ինքն էլ անդամակից էր, չը նայելով իր մօտ բարեկամութեան Թալէաթ և Զավիդ բէյերի հետ, նա քշվեց Անատոլիա, ուր և նա անյայտացաւ։ Յայտնի չէ թէ սպանված է թէ ողջ է դեռ։ Այդ վիճակին ենթարկվեցին նաև Թալէաթի միւս բարեկամները՝ Վարդգէս, Թիւրքական պարլամենտի շատ ժողովրդական մի անդամը, Ակնունի՝ Կ. Պոլսի հայ «Դաշնակցութիւն» ընկերութեան շատ ընդունակ ղեկավարը, Զոհրապ, Կ. Պոլսի երեսփոխանը պարլամենտում, մի ընդունակ բայց անժողովրդական Իբաւագէտ, Վահան Փափազեան և ուրիշ հայեր, որոնց մէջ կային դարձեալ պարլամենտի անդամներ։

Սերբիայից փախած հայերի տուած ճիշդ տեղեկութեան համաձայն, այս ձերբակալվածներից ոմանք յուլիսին բերվել են Ուրֆա։ Այդտեղ տեղական օսմանապետը հիւրասիրել է նրանց և ճիշդ ճաշի ժամանակ մի հեռագիր է ստացել Դիարբէքիրի վալիից, որ անմիջապէս բանտարկեալներին ուղարկէ Դիարբէքիր։ Նրանց ճանապարհ են դրել կէս գիշերից առաջ, բայց հետևեալ առաւօտ «աւազակները» ճանապարհին սպանել են նրանց։ Զոհրապի մասին յայտնի է, որ նա սպանված է այնտեղ, և կարծում են, թէ Ակնունի, Վարդգէս, Փափազեան և Բաստրմաճեան ևս նրա հետ սպանվեցին։ Յամենայն դէպս Ակնունիի մահը, ինչպէս և Վարդգէսինն ու Փափազեանինը, ըստ երևոյթին անկասկած է *)։ Մի շարք քահանաներ և գոնէ մի եպիսկոպոս էլ զինուորական դատարանների միջոցով են սպանված։

VII

Ծախված կանայք եւ երեխաներ

Բանտարկված կամ կասկածելի համարված հայերին յաճախ տանջանքների էին ենթարկում։ Բէդրիի (Կ. Պոլսի ոստիկանապետ) ոստիկանութիւնը երկու սեռի հայ երեխաներին ծախում էր անառակութեան տներին կամ անառակ բարքի տէր Թիւրքերին, որ առիթ տուեց բողոքների Կ. Պոլսում։ Մի քանի տեղերում հայ երեխաներին մահմեդականացուն և կանանց ու աղջիկների շատ տեղեր ընդհանուր վաճառումը քաղաքական նպատակի է վերագրվում։ Օտարները հաւատացած են, որ Թալէաթ այս ոճիրները գործում է այն մտքով, որ Թիւրքիայում հայ ժողովրդի ուժեղ համայնական կազմուածքը չանչանչէ։

Կան Թիւրքաբերներ, որոնք ասում են, թէ հայերն այսպիսի վերաբերմունքին իրաւ դէմ չեն։ Եւ այս հաստատելու համար սրանք յիշեցնում են, թէ «շատ բարձր ծագում ունեցող» մի երիտասարդ պատերազմի ժամանակ Մակեդոնիայից վերադառնալիս տեսել է, թէ ինչպէս սլաւ աղջիկներ պարելիս են եղել Թիւրք անկանոն զինուորների հետ և նրանք այս դէպքը համարում են օսմանեան հեղութեան ապացոյց։ Այս անգութ կատակերգութիւնն անշուշտ մի ժամանցային օֆիցէրի գործ է, որովհետև առ հասարակ Մակեդոնիայում որևէ մի քրիստոնեայ աղջիկ այնչափ յանձն կառնէր մի Թիւրքի հետ պարել, որչափ եթէ մի անգլօ-հնդկական տիկին պրոպպար (danse du ventre) պարէր մի աւազան զուարճացնելու համար։ Ասել է թէ՝ հայերի հոգը չէ այդ բանը՝ մի անխիղճ ստութիւն է։ Գաւառական քաղաքի հայ կինն այժմ այնքան կրթված է և այնքան բարոյական, որ անտարակոյս նա այնչափ պիտի տանջվեր այդպիսի վայրագութիւնից, որչափ սովորական անգլիացի կամ Ֆրանսիացի գաւառացու աղջիկ։

VIII

Գերմանական եւ Թիւրքական բողոքներ

Ամերիկական դեսպանի ջանքերը հայոց վիճակը թեթևացնելու մասին մինչև հիմա ապարդիւն են մնացած պ. Մորգենտաու**), ուշադիր դիտողների կարծիքով, այնչափ մեծ դիպլոմատական եռանդ գործ դրեց Պաղեստինի սիոնականների համար, որոնց ոչ մի ջարդի վտանգ չէր սպառնում, որ այժմ էլ ոյժ չունի հայոց համար գործածելու։ Թալէաթ ու Բէդրի պարզ ասում են, թէ հայեր հալածելը իրանց զուարճութիւն է պատճառում, ուստի և Ամերիկայի գանգատներին խուլ են մնում։ Թիւրքիայում ընակվող գերմանացիք և աւստրիացիք նախ հաւանութիւն էին տալիս հայ «դաւաճանների» պատժվելուն, բայց Թիւրքաց ծայրայեղ մասի միջոցները վերջ ի վերջոյ նոյնիսկ պրուսական ատամոքները հիւանդացրին։ Ճիշդ է, որ հրէայ բարոն Օպէնհայմերը, որ այժմ Սիրիայումն է, կոտորած էր քարոզում և Հալէպի ու Ալէքսանդրէտայի գերմանացի պաշտօնեաները հետևում էին նրա օրինակին, երևի այն գաղափարով, որ պատերազմից յետոյ հայերից ազատ մնացած հողերի վրա գերմանացի գաղթականներ ընակեցնեն։ Բայց գերմանական կառավարութիւնը սկսել էր անհանգստանալ։ Օգոստոսի 31-ին գերմանական և աւստրիական դեսպանները բողոք յայտնեցին մեծ վեզիրին հայկական ջարդերի դէմ և խնդրեցին, որ Բ. Դուռը նրանց պաշտօնապէս գրէ, թէ իրանց կառավարութիւնները ոչ մի մասնակցութիւն չունեն այս ոճիրների մէջ։ Թիւրքիան մինչև հիմա իր դաշնակիցներին դեռ այդ բարի վարքի վկայականը չէ տուած, իսկ գերմանական կայսեր կողմից Էնվէր-փաշային Pour le merite շքանշանի շնորհվելը այն տպաւորութիւնը չէ թողնում, թէ Գերմանիան լուրջ է վերաբերվում այս հարցում։

Եղան մի քանի բողոքներ նաև Թիւրքերի կողմից այս վայրենութիւնների դէմ։ Այնթափի Թիւրքերը մերժեցին և չը թողին, որ այստեղի հայերին աքսորեն։ Թիւրքական գաւառների վալիներից մէկը, որի անունը լաւագոյն է չը տալ, որպէսզի նրան չը տեղափոխեն ուրիշ տեղ—կամ ուրիշ աշխարհ—շատ աքսորականներ է ազատել սովամահից։ Բանմի-բէյ, Զմիւռնիայի աներկիւղ վալին, որ շատ լաւ վերաբերմունք է ցոյց տուած այնտեղ բանտարկված անգլիացի և Ֆրանսիացի բնակիչներին, քանիցս բողոքեց Բ. Դրան այս ոճիրների դէմ և մերժեց կասկածելի նշանակված հայերին յանձնելը։ Շէյխ-ուլ-իսլամը իր խղճի առջև արդարացաւ իր ուշացած հրաժարագիրը ներկայացնելով, իսկ Զահիդ և Զաւիդ բէյերը գանգատից բողոքներ մատուցին, երբ արդէն չափազանց ուշ էր։

Մի քանի օրից Թիւրքական պարլամենտը պիտի գումարվի, և Թալէաթ ու իր ընկերակիցները պիտի պաշտպանեն իրանց հայկական քաղաքականութիւնը։ Մենք երևակայում ենք, թէ ինչ պիտի ասեն իրանց պաշտպանութեան համար—այս ճգնաժամին ազգային միութիւնը ապահովեցնելու պէտքը, վտանգաւոր զրգռման առաջն առնելու կարևորութիւնը, հայերի կատարած ցաւալի ոճիրները, անգլիացիների և ռուսների տիրապետութեան տակ մահմեդականների տանջվելը և այլ այսպիսի արդար խօսքեր։ Դժուար է դժբաղդաբար երևակայել, որ Թիւրքական պարլամենտն իր լիուլի վստահութիւնը չը տայ Թալէաթին և Էնվէրին։ Զարդերը հաւանականաբար պիտի դադարեցվեն, բայց դրա փոխարէն պիտի թողնեն, որ հայերը հանգիստ կերպով սովից կոտորվեն։

Թարգմ. Ս.

*) Ծանօթ. Թարգմ.—Կ. Պոլսի ամերիկան դեսպանը, որ ծագումով էլ հրէայ է։

**) Այս տեղեկութիւնը չէ համապատասխանում իրականութեան։ Գ. Փատրմաճեան և Վահան Փափազեան վաղուց գտնվում են Կովկասում։ Գալով Ակնունուն, նրա մասին ևս հաղորդված տեղեկութիւնը կասկածելի է։ «Մշակի» խմբ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔԻ ՓՈՇԵՐԻՑ

(Մի պատկեր ներկայ փախստականների կեանքից)

I

Անհաբեկ հայ ժողովրդի քոչն էր գնում...

Գնում էր անվերջ, շարան-շարան ու ծայրը չէր հասնում...

Դուռն ճակատագրից հալածված՝ նրանք անցնում էին լեռներ, ձորեր, ու ճամբան դեռ չէր վերջանում։

Թողած տուն ու տեղ, սիրուն վաթանը, նրանք խելագարի նման, խեղճ և շնչասպառ քայլում էին առաջ, միշտ առաջ և երազում էին օր առաջ հասնել այն աւետեաց երկիրը, ուր գէթ մի վայրկեան, մի րոպէ հանգիստ առնէին ու բարբարոս քուրդի ու Թիւրքի սրից զերծ մնային։

Այդ քոչի մէջն էր և կօվեցի Հերիքն իր չորս տարեկան որդու՝ Կորիւնի հետ։

Նրանք էլ քայլում էին, նրանք էլ գնում։

Ոչ ցուրտն էր կանգնեցնում, ոչ սովը, ոչ յոգնածութիւնը։ Անաւոր երթի հետ նրանք էլ առաջ էին անցնում ու ետ չէին նայում։

Երբեմն մայրը գիրկն էր առնում իր Կորիւնին ու քրանքի մէջ կորած՝ վերստեր անցնում, անվերջ գնում, մինչև որ յոգնած, այժը կորցրած՝ ցած գնում նրան, ձեռքից պինդ բռնում և երկուսով քայլում։

Սիրուն էր Կորիւնը։ Սև սև, մեծ աչքերով, կլորիկ երեսով, խելացի արտայայտութիւնով և առողջ կազմուածքով։ Նա հետևում էր մօրը առոյգ, կայտառ քայլերով, սակայն ճանապարհի քարերն ու փշերը մաշում էին նրա բոբիկ, մատաղ ոտքերը և արիւնլուայ անելով կսկծեցնում նրան։

Յոգնած, ուժասպառ նա կանգ էր առնում, խելացի աչքերով մօր թոռոշված դէմքին նայում ու կարծես խնայելով նրան՝ թոթովում։

— Մայրիկ, մի քիչ նստենք, հանգըստանանք։

Մայրը գրկում էր նրան, ցնցոտիներով կապկպում նրա վիրաւոր ոտքերն ու գնում առաջ։

Բայց ինչ կայ անվերջ, անսպառ...

Մօր օյժերն էլ էին սպառվում։ Նա էլ էր յոգնում ու տեղ-տեղ կանգ առնելով շունչը ետ բերում։

Բայց քոչը գնում էր... գնում էր առաջ ու նրա վերջը չէր երևում...

II

Այդպէս անցան նրանք շատ լեռներ ու ձորեր։ Ցերեկը գիշերի փոխվեց և գիշերը ցերեկի, մինչև որ խեղճ ու թշուառ Հերիքը մի ժայռի տակ կանգ առաւ, մի վայրկեան միայն շունչը ետ բերելու ու դարձեալ շարունակելու։ Սակայն նա նստեց ու էլ տեղից վեր կենալ չէր կարողացաւ ու մնաց անշարժ՝ ինչպէս հողին մեխված։

Մանր շնչում էր Հերիքն ու պղտոր, ահաբեկ աչքերով երբեմն քոչին էր նայում, երբեմն Կորիւնին։

Նա տեսնում էր, թէ ինչպէս քոչը գնում էր առաջ, վարարած գետի նման սահում, իսկ ինքը թուլացած, օյժից ընկած, չի կարողանում իր փայտացած անդամներն իսկ շարժել...

— Ողորմա՜ծ Աստուած, ինչ պիտի լինի իմ Կորիւնի դրութիւնը, եթէ ինձ հետ մի բան պատահի,—մտմտում էր նա ու Կորիւնին դէպի գիրկը քաշելով՝ համբոյրներով ծածկում նրա երեսը։

Ահաւոր միտքն էր տանջում նրան, զարհուրելի իրականութիւնը ցնցում։

Երեկոյ էր։

Արևն արդէն թեքվել էր դէպի իր մուտքը և վերջին ճառագայթներով ոսկեզօծել լեռների բարձր կատարները։

Ցերեկվայ տօթը տեղի էր տուել երեկոյեան զով քամուն, օրը հեզհեզ ցրտում էր ու քոչէրների քրտնած մարմինները սառցնում։

Մայր ու որդի նստած էին ճանապարհից դուրս, մի ժայռի տակ լուռ, անձայն և մէկ քոչի շարժվելուն էին նայում, մէկ արևի վերջին ճառագայթների պարին, որ բոպէպէս մի լեռան կատարից միւսն էր թռչում ու կամաց կամաց հանգչում...

— Վեր, բալա,—ասաց Հերիքը, երբ նկատեց, որ արևը հանգաւ ու մութը, սև ու դժան մութը կամաց-կամաց թեւալոխեց երկրին։

Հերիքը այժ գործ դրեց ոտքի կանգնելու, սակայն ուժասպառ գետին ընկաւ ու մի այնպիսի «ա՜խ» քաշեց, որ կարծես սարեր ու ձորեր ուզեց մղկացնել։ Նա զգաց, որ այլևս վեր կենալ չի կարող, որ նրա այժերը սպառել են, որ վրան մի ինչ-որ թուլութիւն է եկել... ու սարսափը պատեց խեղճ կնոջը։

III

Օրը մթնել էր արդէն...

Հերիքը գլուխը դրած ժէռ քարի վրա՝ ծանր հեւում էր ու անքամ, և ահաւոր մրքերը մինը միւսի ետեից անցնում էին նրա գլխով։ Նա հասկանում էր իր դրութեան սոսկալիութիւնը, բայց յոյսը, ա՜խ, խաբուսիկ յոյսը դեռ օրօրում էր նրան իր անուշիկ թեւերի վրա ու նրան միամտացնում։ Նա դեռ յոյս ունէր ոտքի երթալ, գրկել իր Կորիւնին, վազել, հասնել քոչին ու գնա՛լ, անվերջ գնալ... Բայց ուր, ինքն էլ չը գիտէր...

— Ա՜խ, մի վայրկեան միայն ննջեմ, աչքս խուփ անեմ,—ասում էր նա ու դեռ տեղից չէր շարժվում։

Նա չէր նկատում, որ ժամերն արդէն անցել են, ու ինքը գլուխը քարին դրած անշարժ հանգստանում էր, բայց տեղից վեր կենալ չէր կարողանում։

Կորիւնն էլ կծկվել էր, գլուխը դրել մօր ծնկներին և անուշ, անվրդով քուն մտել։

Անցել էր արդէն ժամանակ։

Մութ ու սև էր գիշերը։

Աստղերն էին, որ մութ երկնակամարի վրա պպզում էին ու մօրը և որդուն լուռ նայում։ Զով քամին էր օրօրվում նրանց գլխին, ինչ-որ փսփսում ու վազում առաջ։

Քոչն էլ չը կար։ Նրա տուն էր հասել ու չորս կողմը տիրում էր խորին դերեզմանական լռութիւն։ Հեռուն միայն ինչ-որ առուակի քչքչոցի ձայն էր լսվում, որ գիշերային պահուն կարծես մահվան մեղեդի էր երգում։

Մենակ էին մայր ու որդի ժէռ քարի տակ։ Երեխան անուշ քուն էր մտած, իսկ մայրը կարծես ինչ-որ հիւանդութիւնից ընկած ծանր-ծանր հեւում էր ու անքամ...

Բայց ահա արշալոյսը...

Մութ խաւարի միջից արդէն դուրս ցցեցին լեռներն իրանց ժժդահա կատարները։ Երկինքը նախ սառցաւ բոսորային գոյն, հետզհետէ սկսեց ծիրանագոյն դառնալ, ուր սկսեցին դուրս ցցել արևի ոսկեզօծ ճառագայթները և լուսաւորել վեհապանծ լեռների կատարները։

Ամայի Հայոց երկրի արշալոյսն էր բացվում ու ողջոյն տալիս դատարկ լեռներին ու ձորերին, արիւնով ներկված գիւղերին և աւաններին...

Երբ արևի առաջին ցոլքերն ընկան Հերիքի և Կորիւնի վրա, վերջինս աչքերը բացեց, չորս կողմը նայեց և առանց հասկանալու թէ ուր է ինքը՝ շփոթված կանչեց.

— Մայրի՛կ ջան...

Նա տեսաւ մօրը կողքին, ուրախացաւ, աւելի մօտ քաշվեց, գրկեց նրան ու կէս լալագին կանչեց.

— Մայրի՛կ, ես մրսում եմ... դողում...

Խե՜ղճ Կորիւն, ճիշդ որ նա դողում էր գիշերային սառնամանիքից և ատամ-ատամ զարկում։

— Մայրի՛կ, սոված եմ,—կրկնեց նորից Կորիւնը և աւելի փաթաթվեց մօրը։

Բայց մայրը մանկան լալագին կանչին պատասխան չը տուեց։ Նա լուռ, ապուշ կերպով ամենք

լանչինները էլ իրանց կարգին այդ թագաւորները գտնում ու փոխադրում են այլ տեղ, և այսպէս շարունակաբար։

Վերջապէս այս կերպով քաղաքը հետզհետէ աւերվելու ու քայքայվելու վրա է. մէկ կողմից թալանվում է յոյնին քուրջը, իսկ միւս կողմից մնացեալ շինութիւնները հետզհետէ այրվում են, և եթէ շարունակվի այսպէս լքված դրութիւնը, հրկիզումից զերծ մնացած տներն էլ առաջիկայ ձմերվայ օրերում պիտի քայքայվեն ձիւնից և անձրևներից։ Վանեցի

ԵՐԷԿՎԱՑ ՈՍԿԵՐԻՄՆԵՐԻ ՍՐՏԱՌՈՒՉ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

—

Բալկանեան նոր ռազմաբեմը այնպիսի լարվածութեամբ յառեց իր վրա հանրութեան ուշադրութիւնը, որ պահ մի եա մոռացին արևելեան և արևմտեան մեծ ֆըրօնտների ռազմագործողութիւնները, որոնց միջոցով, վերջին հաշուով, պիտի որոշվի պատերազմական «կատաղի հերօսի» (Գերմանիայի) ճակատագիրը։ Բոլոր մարմնոյ պատութիւններն ամապարում են թեր և դէմ ուղղութիւններով բանակներ ուղարկել դէպի մի փոքրիկ տերրիտորիա—բզկված կիսատարնաքամ Սերբիան—որին վիճակված է քաղաքական խոշոր ակտերի թատերաբեմ ծառայելու։ Գերմանիան՝ իր երբեակ աբբանեակներով հանդերձ՝ կատաղած ժանիքներով է արշաւում հերոսացած ժողովրդի բառաչի հայրենիքի վրա։ Իսկ քառակ համաձայնութիւնը, ամենից առաջ Ֆրանսիան ու Անգլիան՝ հզօր թշնամուն հարուածելու և թոյլ ու մանր դաշնակցին պաշտպանելու պատասխանութիւններով են շտապում բալկանեան բարձունքները։

Այդ բոլոր զօրաշարժերի և բազմախուռն բաղխումների մէջ աչքի են զարնում առանձնապէս երկու պետական մարմիններ, որոնք չափազանց նման վիճակի մէջ են գտնվում, իրանց ընած դիրքով և խաղացած դերով։

Այդ պետութիւններն են Թիւրքիան և Բոլգարիան։

Լաւ մտածեցէք այդ անունների վրա և պատմականօրէն պատկերացրէք նրանց փոխյարաբերութիւնների բնոյթը մերձաւոր անցեալում։

Պատմական ամենամեծ իրօնիաներից մէկն է կատարվում մեր աչքի առաջ։

Ընդամենը երկուսից-երեք տարի առաջ՝ բալկանեան պատերազմի ժամանակ՝ կատաղի օխերիմներ էին նրանք. այսօր սրտաուչ համերաշխութեամբ «եղբայրացել» են Թիւրքերն ու բոլգարները։ 1912 թ. ուղիղ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ցար Ֆէրդինանդը եղաւ առաջինը, որ բալկանեան միակուռ դաշնակցութեան կողմից ձեռնոցներ նետեց Թիւրքիային և իր զօրքին՝ որպէս միացեալ բանակների աւանգարդի՝ առաջխաղացման հրամանը արձակեց։ Որպիսի՞ բացալաւ տողերով, դիւթիչ շեշտերով բաց թողեց բոլգարների արքան իր ռազմայայտարար մանիֆեստը։ Սլաւոնականութեան . . . . . .

դաղափարը յայտարարվում էր այն մեծ ազդակն ու օղակը, որ համախմբում, միացնում էր անխտիր բոլոր Բալկաններին ընդդէմ օսմանցիների՝ . . . . . .

սլաւոն հպատակների դարաւոր թշնամու։ Բալկանեան պատերազմը, որպէս պատմական փաստ, և մանաւանդ նրա յաղթական ելքը, համարվեց պանսլաւոնիստների գաղափարախօսութեան փառահեղ տօնահանդէսը։ . . . . . .

. . . . . ցեղային պատկանելիութեան միքը թեւեր առած ճախրում, սաւառնում էին բալկանեան երկնակամարի վրա և դիւթող աւրուակների նման ներշնչումներ կատարում մարանչող բանակների շարքերում։

Բայց աւա՜ղ, չափազանց կարճատև եղաւ պանսլաւիստների իդէական ցնծութեան տօնախմբութիւնը. բալկանեան արիւնահեղ դրաման գտաւ իր վախճանը «եղբայրասպան» ողբերգութեան մէջ (իմա երկրորդ բալկանեան պատերազմը)։ Բոլգարիան ուղղեց իր սուրը ցեղակից և դաւանակից դաշնակիցների դէմ և մտերմութեան կամուրջ ձգեց իր և երէկվայ օխերիմ թշնամու միջև։ Բալկանների փոխադարձ բզկտումը սաւը դուշի ջուր տեղաց պանսլաւիստների տաքացած գլուխների վրա։

Իսկ ա՞յժմ։ Մաթեմատիկական ճշգրտութեամբ ուղիղ երեք տարի յետոյ՝ 1915 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, նոյն Բոլգարիան ոչ միայն նորից մարանչում է իր ցեղակից ու դաւանակից հարևանի՝ Սերբիայի՝ դէմ, այլ և գրկախառնվելով պանգերմանիզմի ու պանիսլամիզմի ամենամեծ ներկայացուցիչների հետ՝ կուռում է նրանց շարքերում՝ պանսլաւոնականութեան . . . . . .

. . . . . այսինքն իր իսկ հարազատ ցեղի և դաւանանքի ամենահնագոյն ներկայացուցչի՝ Ռուսիայի դէմ։

Բոլգարիան, Ռուսիայի այդ՝ ըստ երևոյթին՝ անկողոպտելի սանիկը, ողջագուրանքով փաթաթվել է Գերմանիայի պարանոցին։ Բոլգարիան՝ այդ դարաւոր սարուկը իսլամական լծի տակ՝ դաշնակցել է այժմ իր պաղերի արնախում թշնամու հետ և նրանցից ներ է ճաճում իր ազատարարի դէմ։ Եւ այն ֆերդինանդը, որ շանթեր էր արձակում առաջ Բոսֆորի ափերի կեղտոտ եաթաղանի դէմ, այժմ նրա առաջին ծառան՝ մենիստրնախագահ Բաղդասարովը ողջոյնով դիմում է Էնվէր-փաշային, որ «Թիւրքբոլգարական զինակցական եղբայրութիւնը կանենայ աջողութիւն ի փառս Բոլգարիայի և Թիւրքիայի»։

Ի՞նչ է նշանակում արդեօք պատմական այդ մեծ հեգնանքը։

Դա նշանակում է ամենից առաջ մի աւելորդ հերքում բասսայապէտ իդէոլոգների վերամբարձ տեսութեան։ Դա նշանակում է՝ այնուհետև և առանձնապէս, իդէալիստ պանսլաւիստների նախիվ զաղափարախօսութեան ամենափառաւոր վիժումն։

Այդ հերքումն ու վիժումը կրկնակի խրատական փաստեր պիտի ծառայեն այն անեղծելի իդէալիստների համար, որ պատմական երևոյթների ծագման հիմքերի մէջ օրենքում են կրօնական, ցեղական կամ ազգային յղացումներ ու սաղմեր և որ չը կարողացան մինչև այժմ ըմբռնել, որ միջպետական և միջազգային յարաբերութիւնների մէջ թըշնամական խոտորումները կամ բարեկամական մերձեցումները խարխլվում են բացառապէս իրական շահերի և ձգտումների վրա։

B. Lucifer

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՑԱՐՍԿՕԷ ՍԷԼՕ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

19 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը Գահաժառանգ Արքայազնի հետ այսօր բարեհաճեց ժամանել գործող բանակից Ցարսկօէ Սէլօ։

Նորին Մեծութեան հետ միասին բարեհաճեց վերադառնալ ճանապարհորդութիւնից Թագուհի Կայսրուհի Ա. Լէքսանդրա Ֆէօդօրօվնան Օգոստափառ Դուստրների հետ։

Սառոյցերից՝ Կայսերական պալատի մինոր գեն. ադիւտանտ Ֆրեդէրիկս։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶՕՐՔԻ ԾՏԱԲԻ ՅԱՏՏ ՐԱՐՈՒԹԻՒՆԸ

—

Հոկտ. 13-ին տեղական դիվիզիայի ամեն մի զօրամասից ներկայացուցիչներ բաղդ ունեցան ներկայանալ ռուս զօրքի Բարձրագոյն Գլխին։

Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւորը Կայսրը հրամայեց հաղորդել դիվիզիայի բոլոր զօրամասերին և Կովկասի ժողովուրդներին, որոնք ուղարկել են իրանց զաւակներին, Նորին Կայսերական Մեծութեան շնորհակալութիւն նրանց գերազանց ռազմի ծառայութեան համար։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետ Հեռ. Գործ.)

19 հոկտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Թագաւորի առողջական դրութիւնը դանդաղ լաւանում է. ցաւերը թուլանում են, բայց թագաւորը իրան թոյլ է զգում։ Զարկերակը ու տաքութիւնը նորմալ են։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—«Օրէնքների ժողովածուի» մէջ հրատարակված է Պետրոգրադի կանոնագծային քաղաքական ինստիտուտի կանոնադրութիւնը հաստատելու մասին։

Սինոդի օբէր-պրոկուրորի օգնականի պաշտօնակատար Իստոմինը նշանակվում է Կովկասի փոխարքայի դիւանապետի պաշտօնակատար Նիկոլսկիի տեղ, որ արձակվում է պաշտօնից ըստ խնդրագրի, հիւանդութեան պատճառով։

Մոսկվայի դատաստանական պալատի դատախազ Ստեպանովը նշանակվում է սենատի 1-ին դեպարտամենտի օբէր-պրոկուրոր։

ՏՕԿԻՕ.—Եպոնական դատարանը աւարտեց այն անձանց գործի քննութիւնը, որոնք պատրաստում էին ապստամբութիւն Ֆորմօզա կղզում։ Մեղադրվող 1413 հոգուց 903-ը դատապարտվել են մահվան պատժի. արդարացան 75 հոգին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

—

Ստացանք Թիֆլիսում, Զաքուհի և Վարդան Գասպարեանների՝ հանգուցեալ Մարիկոն Գասպարեանի դագաղի վրա պակ դնելու փոխարէն՝ 15 ռուբլի։

ԾՈՒՑԱԿ

—

Կարինդաշեվկայի Եուխրատուցիների (Ծագում հայ փախստականների)

(Տես «Մշակ» № 196)

Եղբ. Ս. և Վ. Մաթէոսեան 25 ռ., Մ. Անանէլեան 20 ռ., եղբ. Գիւրջեան, եղբ. Մազմանեան 15-ական ռ., Ա. Մինասեան 6 ռ., Մ. Հասրաթեան, եղբ. Վարդանեան, եղբ. Սարեան, Ս. Զէրքէզեան 5-ական ռ., Պ. Մինասեան, Ա. Կարագէօզեան, Ց. Ստեփանեանց, եղբ. Խաչիկեան, Հ. Բէկ-Նազարեան, Ց. Բայթերեկեան, Դ. Մանուկեան, Ս. Մուրադեան, Ղ. Որդանեան 3-ական ռ., Վ. Մաթէոսեան, Ց. Վարդանեան, Ց. Կասակեան, Մ. Ազատեան 2-ական ռ., Գ. Վարդանեան, Վ. Մինասեան, Ս. Մաթէոսեան, Մ. Աթօեան, Ս. Ցակոբեան, Ե. Բարմաքեան, Ա. Կահրամանեան, Յ. Эдварсь, И. Зайцевъ, В. Грудо 1-ական ռ., Ա. Դիւզնաեան, Անյայտից 50-ական կ.։ Գումար՝ 147 ռ., որից ծախված է 5 ռ. 50 կ., իսկ մնացեալ 141 ռ. 50 կ. ուղարկված է խմբագրութեան։

ՈՐԲԵՐԻ ՀԱՄԱՐ

—

Այսօր կատարվելու է միօրեայ հանգանակութիւն յօգուտ՝ Թիֆլիսի Հայ Ծխական Համայնքի առաջին ապաստարան-օրբանոցի։ Հանգանակութիւնը կատարվելու է «Վանմայ» թերթի միջոցով, որի մի համարը (№ 1) լոյս է տեսել և այսօր վաճառվելու է։ Այս համարի մէջ տպված է Մեսրոպ եպիսկոպոսի հետաքրքիր յօդուածը, որ արժանի է ուշադրութեան իր պարունակած տեղեկութիւնների համար որբերի մասին։

«Երբ Թիւրքաց Հայաստանի գաղթն սկսվեց, հասարակական ամեն տեսակ մարմիններ կազմակերպեցին դժբաղդացածների օգնութեան գործը։ Ժողովի հրաւիրեցի Թիֆլիսի քահանաներին և հոգաբարձութիւններին, որ միացեալ այժերով, իբրև օրոշ կազմակերպութիւն, հանդէս գան և իրանց աշակցութիւնը ցոյց տան ազգային աղէտի գոհերին։

«Հրաւիրվածներն ընտրեցին մի յանձնաժողով, որ ամիսներից ի վեր առանձին եռանդով տանում է մի չափազանց լուրջ աշխատանք. նա ժողովեց գաղթականների անչափահաս և որբ երեխաներին և նրանց համար ապաստարան բացեց Ղարաքիլիսայում։ Յանձնաժողովը այժմ ապաստարանը փոխադրել է Թիֆլիս, Կրծանիսի այգիները, իբրև եօթներորդը երկու ամսից ի վեր քաղաքումս բացված ապաստարաններին։

«Միաբանութիւնների և հոգաբարձութիւնների ապաստարանը—առաջինը Թիֆլիսի թեմում—սկիզբներում բաւարարում էր համեստաբար սակաւաթիւ երեխաներին տեղաւորելու համար, սակայն յաւելեան գաղթը իր անօրինակ արհաւիրքներով օգնութեան կարօտ երեխաների թիւը մի քանի հազարի հասցրեց։

«Ամենավերջին տեղեկութիւններով, կլոր թիւերի վերածած, այդ երեխաներից այժմ գտնվում են. 100 հոգի Իգդիրում, 200-ը Էջմիածնում, 250-ը Աշտարակում, 600-ը Երևանում, 50-ը Նախիջևանում, 200-ը Աւէքսանդրօպոլում, 100-ը Կաղզվանում և Կարսում, 200-ը Նոր-Բայազէտում, 450-ը Դիլիջանում, 750-ը Թիֆլիսում, 350-ը Բագուում։ Այդ թիւը գնալով օրից օր աւելանում է ծնողների մահացութեամբ և նրանց անօգնական վիճակով, որ ստիպված բաժանվում են իրանց զաւակներից և բերում յանձնում են հանրային ապաստարաններին։

«Երեխաների պահպանութեան գործը իրանց վրա են ընդունել Եղբայրական Օգնութիւնը, Հայկական Կենտրոնական, Մոսկվայի, Պետրոգրադի կոմիտէները, Բարեգործական Ընկերութեան ճիւղերը, Բազուի Կուլտուրականը, Նպաստամատոյցը և Միութիւնների ու Հոգաբարձութիւնների Յանձնաժողովը. իսկ Իգդիրում 100-ից աւելի որբերին պատսպարել է տիկին Տէր-Գրիգորեանը կազմակերպութիւնների նիւթական աջակցութեամբ։

«Պահպանութեան միջոցները հայթայթվում են հասարակական նուիրաբերութեամբ, պետական և կովկասի գլխաւոր կոմիտէի սահմանված ամսական 6000-ական ռուբլի նպաստով, որ գլխաւոր կոմիտէն տալիս է Հայկական Կենտրոնականին, իւրաքանչիւր երեխային օրական 15 կ., ամսական 4 ռ. 50 կ.-ի հաշուով։ Բացի այդ՝ Պետական Դումայի անդամ պ. Միքայէլ Պապաջանեանը ներքին գործերի մինիստրի նախագահութեամբ կազմված խորհրդակցութիւնից ստացել է 60,000 ռ. 2000 երեխայի համար, օրից 30,000-ը միանուագ ծախքերի, 30,000 մի ամսվայ ծախքերի համար, իւրաքանչիւր երեխայի օրական պահուստը հաշուելով 50 կ., ամսական 15 ռ.։ Այդ դրամը տակաւին ստացված չէ, օրոշ ձևական գործողութիւններ պիտի կատարվեն։

«Թիֆլիսի երկամսեայ փօրձը ցոյց տուեց, որ մի երեխայի համար օրական 50 կ.-ից պակաս եթէ ոչ անհնար, գոնէ շատ դժուար է հոգալ նրա կերակուրը, հագուստը՝ ընակարանի վարձը, կահաւորութիւնը և ուսումը։ Երբ 3000-ից աւելի երեխաների համար ստացվի պետական օժանդակութիւն, հասարակութիւնը նրանց համար այլևս հոգալիք չի ունենայ, սակայն քանի որ այժմ մեր ձեռքին կայ միայն տասնհինգական կոպէկ, այն էլ 1330 երեխայի համար, քաղաքիս միաբանութիւնների և հոգաբարձութիւնների միացեալ մարմինը դիմում է քաղաքիս ազգաբնակութեանը և օգնութիւն խնդրում։

«Օգնեցէք պատերազմի ամենաանմեղ զոհերին»։

ՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՕԳՏԻՆ

—

Ինչպէս գիտեն մեր ընթերցողները, Վանի նահանգապետ Ա. Տէրմէնը, օրոշած լինելով կազմակերպել քաղաքացիական միլիցիա հայ կամաւորներից յանձնել էր գործի կազմակերպութիւնը պ. Արմենակ Եկարեանին։ Վերջինս, մասնակցութեամբ պրօֆ. Մինասեանի, կազմել էր վանեցիներից մի յանձնախումբ այդ միլիցիայի ծախքերը հոգալու համար և դիմել էր այդ նպատակով նաև Վեհ. Կաթողիկոսին՝ խընդրանօք դրամական օժանդակութիւն ցոյց տալ իր տրամադրութեան ներքոյ գտնված գումարներից։ Վեհ. Կաթողիկոսը բարեհաճել էր հրամայել դիւանատանը՝ տալ յիշեալներին այդ նպատակի համար 3000 ռուբլի։ Այս գումարը սինօդից ուղարկված լինելով «Մշակի» խմբագրութեան, մենք յանձնեցինք գումարը յիշեալ յանձնախմբին։

Այս առիթով հարկաւոր ենք համարում յայտնել, որ, հայկական միլիցիայի կազմակերպութիւնը ցանկալի նկատելով Վան վերադարձող փախստականների ապահովութեան և երկրի մէջ կարգի պահպանութեան համար, փափագելի էր, որ այդ միլիցիան, որի թիւը առ այժմ 200 է նշանակված, աւելի մեծանար, հասցվէր մինչև 500-ի կամ 1000-ի, սակայն որովհետև նրա պահպանութեան ծախքը պէտք է հայթայթէ հայ հասարակութիւնը (կառավարութիւնը տալու է միայն զէնք), ուստի ցանկալի է, որ հայ հասարակութիւնը ևս չը զլանայ իր նիւթական օժանդակութիւնը, ինչպէս չէ զլացել Վեհ. Կաթողիկոսը։ «Մշակի» խմբագրութիւնը պատրաստ է ընդունել այդ նպատակով նուէրներ և հասցնել ըստ պատկանելոյն։

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ՍՇԽԱՏԵԼ ՉԵՆ ՈՒԶՈՒՄ*)

II

Առիթը եկել է, և պէտք է միշանկեալ ասենք, որ մանաւանդ վերջին գաղթականութեան հանդէպ վաղարշապատցիների մեծ մասը մի վերին աստիճանի դատապարտելի դիրք բռնեց։ Փախստականները նրանց համար մի ծանր բեռ էին. բարոյական կամ նիւթական օժանդակութեան մասին խօսք լինել չէր կարող։ Անտանելի դարձած գաղթականները սակայն վաղարշապատցիների գրպանը բաւական փող լցրին. բացի այն, որ մի շարք տներ չափից դուրս էժան գներով իրեղէն և անասուն ձեռք ձգեցին, բազմաթիւ մարդկանց համար էլ գաղթականական հասանքը ապրուստի աղբիւր բաց արեց. փոքոցների և լճափի մշտական բաժանորդներն անգամ գործ գտան, որը սանիտար գրվեց, որը հաց բաժանող, որը տրնտես, որը կերակրող, որը ծառայ։ Շատ լաւ վիճակի մէջ էին նոյնպէս առևտրականները, մասաւանդները և արհեստաւորները. գործ էր, որ թափվում էր։ Վաղարշապատցի կանայք էլ անգործ չը մնացին, որը գթութեան քայր դարձաւ, որը սրբանամ, որը դերձակուհի, որը կար անող, որը ծառայող, մի խօսքով՝ ամենքն էլ իրանց համար եկամուտի աղբիւր գտան։ Միայն քահանաներն էին, որ մի շարք ննջեցեալներ մասամբ անվարձ թաղեցին և մի քանի երեխաներ անվարձ մկրտեցին։ Բայց այն էլ ասենք, որ գործակալը մի օր թաղվածների և մկրտվածների ցանկերն ի ձեռին փնտռում էր Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովի նախագահին, որ նրանից պահանջէր իր և իր պաշտօնակիցների արդար իրաւունքը։ Չը գիտեմ դժբաղդաբար՝ քահանաների պահանջը բաւարարվե՞ց թէ ոչ։ Ինչ որ է, դառնանք մեր խնդրին։

Գաղթականը եկած օրից իր չորս կողմը այնքան շատ իրան շահագործելու պատրաստ մարդիկ տեսաւ, որ սկսեց բոլորի վերաբերմամբ էլ անվստահութիւն տածելու։ Ուրախ էին նրա համար և՝ վարդապետները, և՝ եպիսկոպոսները, և՝ իրանց սրտանց օգնել ցանկացող սակաւաթիւ անհատները. նրանց խորհուրդները կամ պատուէրները նա լսում էր այնպէս, ինչպէս մի ժամանակ սովոր էր լսել թիւրք պաշտօնեային։ Եթէ հնարաւոր էր, աշխատում էր հեռու մնալ նրանցից, իսկ եթէ ոչ՝ փորձում էր նրանց էլ մատնել և դիմել ճիշդ այն ձևով, ինչ ձևով որ երբեմն մատնում և դիմում էր թիւրք պաշտօնեային։ Տխուր էր այս իրողութիւնը, բայց իրողութիւն էր։

Վաղարշապատցին գանգատվում է, որ ինքը գաղթականներին առաջարկել է օրական 1 ռ. 20 կ. մինչև 1 ռ. 50 կ., բայց վերջիններս չեն համաձայնվել գնալ մշակութիւն անել։ Դուցէ այդպիսի դէպքեր եղել են, դրանք մեզ յայտնի չեն, բայց մենք գիտենք դէպքեր, երբ ուզեցել են գաղթականներին սովորականից աւելի ցածր գնով աշխատեցնել, և վերջիններս շատ անգամ մերժել են։ Կարող է պատահել, որ մի քանի անփորձներ 1 ռ. 50 կոպէկով էլ աշխատած չէ լինեն՝ հէնց միայն խաբված չը լինելու նըկատառումով։ Այն էլ կայ, որ 15 օրվայ ճանապարհ կտրած, հոգեկան և ֆիզիքական տանջանքների ծանրութիւնից լքված մէկին եթէ առանց հանգստացնելու, առանց կըշտացնելու աշխատանք առաջարկես, նա կը մերժէ։

Գաղթականների դրասենեակի ծառայողները կարող են վկայել, թէ քանի քանի տաղտարդիկ և կանայք եկել աշխատանք են խնդրել, աշխատանք կայ եղել, բայց կաղմակերպող և կարգադրիչ մի մարմնի բացակայութեան պատճառով դիմումները մեծ մասամբ մնացել են անհետևանք։

Ուրիշների հետ մի անգամ մենք էլ մեղադրում էինք մի յաղթանդամ փախստականի, որ փոխանակ աշխատանք փնտռելու՝ եկել է յանձնաժողովից ալիւր խնդրելու։ Գաղթականը մեր ծանր խօսքերը լուռ լսելուց յետոյ անխօս հեռացաւ դրասենեակից։ Յետոյ միայն իմացանք, որ այդ մարդը Կարաքիլիսէի հարուստներից է եղել, այժմ թէև օշնչով չէ տարբերվում իր համագիւղացիներից, բայց երկրում մի շարք վաճառատներ և բաւականին ստացուածք է ունեցել։ Զրկվել է ոչ միայն դրանցից, այլ և իր մեծ ընտանիքի քանի անդամներից։ Ահա այդ մարդուն մենք առաջարկում էինք բանւորութիւն անել. գուցէ ասողներ լինեն, որ աշխատելն աւելի լաւ է, քան թէ անգործ մնալն ու խոկալը. բայց իսկապէս խոստովանենք, որ նման դժբաղդների համար՝ այդ անցումը կը լինի շատ ծանր և ողբերգական։ Դժուար է նոր պայմաններին մի անգամից ընտելանալ։

Դառնանք այժմ մեղադրվող կանանց. հիւանդանոցում նրանք լաւ չեն աշխատելիս եղել. դրա պատճառն այն է, որ թիւրքահայ գեղջկուհու համար հիւանդանոցի աշխատանքը, ինչքան էլ նա սև լինի, բոլորովին արտասովոր է, ուրեմն և ոչ գրաւիչ, մանաւանդ սկզբնական շրջանում։ Աւելացրէք նաև այն, որ այդ կանայք էլ երկրից են եկել. այնքան հեշտ չեն կարող մառանալ իրանց գլխին եկածը։

Վաղարշապատում մի քանի տիկիններ գանգատվում էին, որ գաղթական օրբ աղջիկները չեն համաձայնվում աղախնութիւն անել. ծայր աստիճան չքաւոր ընտանիքն անգամ չէ ուզում իր աղջկանն օտարի դռանն աղախին տեսնել։ Դրա պատճառն էլ, մեր կարծիքով, նամուսի վերաբերմամբ հայ գիւղացու ունեցած հասկացողութիւնն է։ Մեղադրելուց առաջ՝ աշխատենք հասկանալ նրան։

Մեր բոլոր ասածներից յետոյ եթէ ի նկատի ունենանք նաև այն ակնբախ երևոյթը, որ գաղթականների մէջ աշխատունակ տղամարդիկ և կանայք շատ քիչ կան, այն ժամանակ նրանց դատախազների բոլոր մեղադրանքները ջուրը կընկնեն։ Գաղթականների կրածն իրանց հերիք է. ինչպէս պ. Իշխանեանն է ասում, ներելի չէ դատավճիռներ արձակել անօրինակ ողբերգութեան մէջ տառապող դժբաղդ զոհերի հասցէին։

Վերջացնելով մեր խօսքը՝ պնդում ենք, որ գաղթականների մասին հոգացող մարմինների պարտքն է նախ մի քանի օր կուշտ ուտեցնել նրանց, մնաւնդ տալ, բնակարան տալ, հանգստացնել և յետոյ միայն միջոցներ ձեռք առնել նրանց աշխատանք հայթայթելու։ Եթէ աշխատանքի բիւրօներ հիմնված լինեն բոլոր այն վայրերում, որտեղ գաղթականներ են տպրում, և լինեն դրանք լաւ հիմունքների վրա դրված, այն ժամանակ մենք կը տեսնենք և մի անգամ ընդ միշտ կը համոզվենք, որ գաղթականները աշխատել են ուզում, որ նրանք անգործ մնալու սովոր չեն։ Ս. Ոսկերչեան

Մոսկվա

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

—

Քաղաքների Միութեան կովկասեան լիազօրը հեռագրեց Բաթումի քաղաքագլխին, որ Փոխարքան փախստականների բժշկասանիտարական հոգսը Կովկասում և Թիւրքիայում, ուստի զօրքի գրաւած վայրերում, յանձնել է Քաղաքների Միութեան։ Եւ այդ ի նկատի ունենալով, լիազօրը խնդրում է Բաթումի քաղաքագլխին Բաթումում կազմակերպել շրջանային կոմիտէ իր նախագահութեամբ։

—

Քաղ. Միութեան լիազօրը Մոսկվայից ստացաւ 5000 ռ. սպիտակեղէն փախստականների երեխաների համար։ Այդ սպիտակեղէնը պէտք է բաժանվի հայ, թուրք և լեհ օրբերին։ Սպիտակեղէնի մի մասը ուղարկվելու է Բաթում, եթէ այնտեղ աղաբացի օրբեր լինեն՝ նրանց բաժանելու։

—

Նիկոլենկոյի ալիւրի ֆիրմայի ներկայացուցիչ Գերմանովիչ Փոխարքայի դիւանատան հետ կապել է մի պայման, որի հիման վրա նա պարտաւորվում է փախստականների համար վեց ամսվայ ընթացքում մատակարարել 360 վագոն ալիւր, 60 վագոն ամսական։ Ալիւրը բերելու գործը ապահովված է, որովհետև ֆիրմային տրված է վագոններ ստանալու իրաւունք։ Նոյն այս ֆիրման վագոնների իրաւունք է ստացել Թիֆլիսի ազգաբնակութեան համար ալիւր հասցնելու։ Ալիւրը ստացվում է կանոնաւորապէս։

—

Երեք օր է Բաքուում հանգանակութիւն է կատարվում փախստականների օգտին։

—

Վանի շրջանապետ Տերմէնի միջնորդութիւնը, որպէսզի Վանում բացվի փախստականների համար հիւանդանոց, որբերի ապաստարան և ուղարկվեն տաք երեք, Բաղքների Միութեան լիազօրը զեկուցեց Փոխարքայի օգնական Ն. Լ. Պետերսօնին։ Բաւարարելու համար գնդապետ Տերմէնի միջնորդութիւնը, որը պաշտպանեց գեն.-մայոր Վ. Մ. Թամամշեան, սենատոր Պետերսօնը յանձնեց Քաղաքային Միութեան պայմանով, որպէսզի հիւանդանոցի, ապաստարանի և իրեր ձեռք բերելու համար կազմվեն առանձին նախահաշիւներ։

—

Երևանի նահանգապետը հեռագրում է Բա-

*) Տես «Մշակ» № 231.

ղաքների Միութեան. «Այս օրերս եղայ Նոր-Բայազէտում. տեսայ բազմաթիւ փախստականներ։ Ապաստարանի բացակայութեան մասին ոչ մի խօսք չեղաւ։ Բաժնեվճարները խիստ էլ ուշացան դրամը ուշ ստանալու պատճառով։ Ուշ ստացվեց և աւելորդ։ Փախստականներին հասանելիք գումարի մի մասը ես յանձնեցի Խաչէն եպիսկոպոսին»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բագուի Հայոց Կուլ. Միութեան Նպաստը Խանքենդ, 7 հոկտեմբերի

Անհաւասիկ 14 ամիս է, ինչ մեր պատերազմի վայրերում, և այսքան ժամանակվայ ընթացքում, եթէ չը հաշուենք կառավարութեան կողմից տրվող նպաստը, մեր բարեգործական ու կուլտուրական հաստատութիւնների կողմից մի մի նպաստ չէ տրվել կարիքաւոր պատերազմի հետևանքներին։ Գուցէ սրանց անուշադրութեան մատնելու պատճառն այն է, որ աւելի հրատապ խնդիրներով է զբաղված մեր հասարակութիւնը, ինչպէս օրինակ փախստականներին օգնելու գործն է և այլն, բայց, այսու ամենայնիւ, չը պէտք է մոռացութեան տալ և մեր կարիքաւոր պահեստներին օգնելու գործը։

Ինչպէս յայտնի է, սրանց մի քանի ամիս առաջ պահեստների ընտանիքներին նպաստ տալու պարտականութիւն էր յայտնել Բագուի Հ. Կուլտ. Միութիւնը։ Վերջինս որոշել էր գարնանացանի համար սերմացու ցորեն բաժանել և այդ առիթով յատուկ մարդիկ էր ուղարկել գիւղերը՝ ցուցակագրելու կարիքաւոր պահեստների ընտանիքներին։ Բայց հետևանքում ոչինչ չեղաւ։ Դեռնէ Ղարաբաղի շրջանում՝ խոստացված սերմացուն չը բաժանվեց։

Այժմ, ինչպէս ստոյգ աղբիւրից տեղեկանում ենք, Բագուի Հ. Կուլտ. Միութիւնը գործնական կերպով է հանդէս եկել, այն է 10,000 ր. փող է դրել Շուշու քաղաքագլխի տրամադրութեան տակ, որպէսզի վերջինս այդ փողով սերմացու գնէ և բաժանէ շրջանիս պահեստների ընտանիքներին։ Ինչպէս լսում ենք, պ. քաղաքագլուխը իր կողմից դիմել է Շուշու բոյսի զէմստվային ագրոնոմին, որպէսզի սա քանակցութիւններ սկսէ Ռուսաստանի ցորենավաճառների հետ և էժան գնով ցորեն բերէ։

Սակայն հարց է ծագում, որ մթթէ Բագուի Հ. Կուլտ. Միութիւնը չէր կարող այդ նպաստը մի այնպիսի մարմնի տրամադրութեան տակ դնել, որը սոսկ այդ նպաստի կանոնաւոր բաշխման խնդրով զբաղվէր, որ ազատ լինէր օւրիշ տեսակ պարտականութիւններից։ Չէ որ Շուշու քաղաքագլուխը օրքան էլ բարի ցանկութիւններ տէր լինի, առանց այն էլ բազմատեսակ պարտականութիւններ ունի կատարելու։ Իսկ ինչպէս՞ է արդեօք Շուշու բոյսի զէմստվային ագրոնոմը Շուշու քաղաքագլխից ստացած յանձնարարութիւնը կատարել։ Ցիշեալ ագրոնոմը ինքը տակաւ լինելով՝ Ռուսաստանից ցորեն գնելու գործը յանձնել է իր օգնականին։

Խիստ ցանկալի է, որ Կուլտուրական այդ ձեռնարկութիւնը տրվէր այնպիսի մարմնի ձեռք, որ միմիայն այդ նպաստի կանոնաւոր օգտագործման խնդրով զբաղվէր։

Այդ մարմինը պէտք է բարեխիղճ կերպով պահեստների ընտանիքներին երեք կատեգորիայի բաժանէ—հարուստ, միջին կարիքաւոր և ծայր կարիքաւոր—և այդպիսով պրոպորցիոնալ կերպով սերմացուն բաժանէ։

Այդ գործում անշուշտ պէտք է մասնակից անել գիւղական բարեխիղճ ներկայացուցիչներին։ Ա. Ասլանեան

ԵՐԿՈՒ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

✦ Փոխարքայ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիվիչ շաբաթ, հոկտ. 17-ին, երեկոյեան մեկնեց գործող բանակը։

✦ Երէկ, Ալէքսանդր III-ի մահվան տարեդարձի օրը, Զինուորական տաճարում Պրոտոբիմ արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ ռուս հոգևորականութիւնը կատարեց հանդիսաւոր հոգեհանգիստ, որին ներկայ էին Փոխարքայի օգնականները, գեներալ շտաբի պետը, գեներալիտէտը և շատ զինուորականներ ու քաղաքացիական պաշտօնեաներ։

✦ Այսօր տեղի կունենայ հայ եկեղեցական միաբանութեան և հոգաբարձութեան կազմակերպած հանդանակութիւնը «Լուսոյ» թերթի վաճառումով։ Ուրիշ օրերի օրինակով՝ այսօր էլ օրիորդներ ու երիտասարդներ տուփերով կը շրջեն փողոցներում, իսկ հրապարակներում և մարդաշատ վայրերում քեօսկեր կը լինեն։

✦ Այսօր Կովկասի Կանանց Ընկ. Գայիանեան դպրոցին կից բացում է ձրի ճաշարան՝ փախստականների 40 երեխաների համար։ Կովկասի Հայոց Կենտ. Կոմիտէտը այդ ճաշարանին ամսական յատկացնելու է 500 ռուբլի նպաստ։

✦ Թիֆլիսի երկրաչափական դպրոցին կից բացվեց թէյարան՝ աշակերտների համար։

✦ Այս օրերս տեղի կունենայ հանդանակութիւն Կանանց Ընկ. Զրի և Էժանագին Ճաշարանի օգտին։ Հանդանակութիւնը կատարվելու է տնից տուն մտնելով։

✦ Վաղը, հինգշաբթի, քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը մեկնում է Բաթում, այնտեղ Կովկասեան Քաղաքների Միութեան կոմիտէի ճիւղ հաստատելու։

✦ Թիֆլիս վերադարձաւ իր արձակուրդից քաղաքային սանիտարա-բժշկական վերատեսուչ բժիշկ Կ. Ն. Ստեփանեան։

✦ Այսօր քաղ. վարչութեան անդամ Արզուութեան-Երկայնաքաղուկ մեկնում է Գանձակի նահանգը՝ այնտեղ տեղաւորված փախստականների բժշկա-սանիտարական դրութիւնը քննելու։

✦ Ներկայումս Թիֆլիսում է գտնվում Լոնդոնի մեր աշխատակից պ. Արշակ Սաֆրաստեան, որ Լոնդոնից եկել է յատկապէս ուսումնասիրելու Թիւրքաց Հայաստանի գաւառների դրութիւնը, օրօնք գտնվում են ռուս զօրքի ձեռքին, և այդ մասին թղթակցելու Լոնդոնի թերթերին։ Պր. Սաֆրաստեան այս երկու օրը կը մեկնի Երևան և Էջմիածին, որտեղից ապա յիշեալ գաւառները։

✦ Բաստովից վերադարձաւ քաղ. վարչութեան անդամ Մ. Զաբարը։ Նրա ասելով՝ հացը Բաստովում նոյն գնով է ծախվում, ինչ որ այստեղ Թիֆլիսում, բացի 3-րդ տեսակից, որ կէս կոպէկ պակաս է։ Սակայն Բաստովի հացը իր օրակով անհամեմատ բարձր է Թիֆլիսի հացից։ Այնպիսի հաց, ինչպիսին թխվում է Բաստովում, Զաբարի ասելով, չի թխվել Թիֆլիսում մինչև անգամ պատերազմից առաջ։ Ինչ վերաբերում է միւս անհրաժեշտ մթերքներին ու իրերին, նրանց գները անհամեմատ ցած են, քան գոյութիւն ունի Թիֆլիսում։ և այստեղի թանգութիւնը ոչինչով չէ կարող արդարանալ, եթէ մինչև անգամ ճանապարհածախսն էլ հաշվի կը ինակի։

✦ Թիֆլիսի կայարանի կառավարչին առաջարկված է կայարանում եղած փայտով բեռնաւորված վագոնները դատարկել և նրանց ուղարկել Բալաջարի։ Զը նայած ձեռք առնված միջոցներին՝ մի օրվայ մէջ աջողվեց դատարկել 36 վագոն միայն, իսկ 97 վագոն առ այժմ մնում են բեռնված։ Հետևեալ օրը եկաւ նոքից 40 վագոն փայտով։ Կայարանին կից եղած բակն ամբողջապէս լիքն է փայտով, այնպէս որ տեղ չը կայ վագոնները դատարկելու։ Փայտը այստեղից պահեստներն են տարվում շատ սահմանափակ քանակով։ Եւ այս ամենից յետոյ քաղաքում փայտի սով է տիրում։

✦ Հոկտ. 19-ին Թիֆլիսում ստացվեցին հետևեալ ապրանքները. ալիւր 27 վագոն, հաճար 1 վ., շաքարաւազ 8 վ., մրգ 1 վ., գարի 7 վ. և նաւթ 7 վագոն։

✦ Ալէքսանդրոպոլից գեն. Թամամշեան հեռագրով հարցրել է Քաղ. Միութեան լիազօր Ալ. Խատիսեանին, թէ Քաղ. Միութիւնը օրքան տաք իրեր կարող է պատրաստել փախստականների համար։ Խատիսեանը պատասխանեց, որ Միութեան կոմիտէտը շաբաթական կարող է պատրաստել 1000 վերմակ և 500 տաք իրեր։

✦ Քաղաքների Միութեան կովկասեան ճիւղին բաց է թողնվում 124,000 ր.՝ աւտոմոբիլային տրանսպորտ կազմակերպելու Զուլֆայի, Վանի և Դիլմանի ուղղութեամբ։

✦ Առևտրական դպրոցները վերաբացելու համար Թիֆլիս եկած առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան շրջանային տեսուչ Պ. Վերխովսկի հոկտ. 16-ին և 17-ին վերաբացեց Տ. Փիլոյեանի մասնաւոր առևտրական գիտութիւնների դասընթացքները։

✦ Հոկտ. 19-ին № 40 հիւանդանոցում ընդունվեցին խոլերայով հիւանդ երկու հոգի. նոյն օրը հիւանդանոցում եղած 60 հոգուց մեռաւ մէկը։ Այժմ հիւանդանոցում կայ 61 հիւանդ։

ԿՈՎԿԱՍ

✦ Բագուից յայտնում են, որ այնտեղ ոսոլ կանութիւնը խուզարկութիւն կատարեց մի շարք խանութներում և գտաւ շատ մանր դրամ։ Ցանցաւորները ենթարկվելու են պատասխանատուութեան վարչական կարգով։

✦ Բագուի քաղաքապետը մանելով մի կոշկակարանոց՝ պահանջեց օրսորդական կոշիկներ։ Նրանից ուզեցին 16 ռուբլի։ Մինչև պատերազմը այդ կոշիկների զոյգն արժէր 4 ռուբլի։ Իսկ միւս խանութներում դրանք գնահատվում են այժմ 5—6 ռուբլի։ Արհեստանոցի տէրը բանտ դրվեց 3 ամսով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՎՕԴՎՕԶՈՎԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Կիրակի երեկոյ, հոկտեմբերի 18-ին, Երաժշտական Դպրոցի դահլիճում ռուս գրականագէտ Վ. Վօդովօզովը կարդաց իր առաջին դասախօսութիւնը՝ «Սերբական Մակեդոնիայի և սերբ-բուլգարական յարաբերութիւնների մասին»։

Դասախօսը պատմեց իր ճանապարհորդական տպաւորութիւնները և սերբական նշանաւոր գործիչների հետ ունեցած հանդիպումներն ու զրոյցները, որ եղել են 1914 թւի դեկտեմբերի և 1915 թւի յունվարին։ Նրա նպատակն էր պարզել, թէ ըստ սերբական Մակեդոնիայում ինչպէս է ազգաբնակութեան տրամադրութիւնը, որ կողմն է հակված նրա համակրութիւնը՝ Բուլգարիայի, թէ Սերբիայի։ Այդ հարցի լուծմամբ դասախօսը նպատակ էր դրել պարզել, թէ ում է հանելու Մակեդոնիան։ Սերբ կառավարութիւնը, մասնաւորապէս գահաժառանգ Ալէքսանդրը, ամեն գլուխ տալել են նրան, և դասախօսը իր ճանապարհորդութիւնից շատ գոհ էր։ Նրան ամեն տեղ ընդունում էին իշխանութիւնները, ուղեկցում էր յատուկ նշանակված ուղեւորը, երբեմն հինգ-վեց ժանդարմներ։ Շնորհիւ այդ բանի, ազգաբնակութիւնը նրան նայում էր որպէս սերբ կառավարութեան պաշտօնեայի վրա և չէր կարող վստահութեամբ վերաբերվել։ դրա համար և դասախօսը նախապատրաստում է, որ իր ստացած տպաւորութիւնները կարող են լինել միակողմանի և թերի։

Նա սկզբում ցանկացել է իմանալ, թէ ինչպիսի ժողովուրդներ են բնակված Սերբական Մակեդոնիայում. այդ բանում մեծ դժուարութիւնների է հանդիպում այն պատճառով, որ սերբական վիճակագրական տեղեկութիւնները հիմնվին անհամապատասխան են բուլգարականին։ Օրինակ՝ ըստ սերբական ստատիստիկայի Մակեդոնիայում ապրում է 2 միլիոն սերբ, իսկ ըստ բուլգարական ստատիստիկայի՝ միայն 700 հ. սերբ... Եւ հակառակ ըստ բուլգարական ստատիստիկայի Մակեդոնիայում ապրում է 1,180,000 բուլգար, իսկ ըստ սերբական ստատիստիկայի միայն 50,000 բուլգար, քսան անգամ քիչ։ Այդ թիւերը պարզօրէն ցոյց են տալիս, թէ օրքան հեռու են բուլգարները և սերբերը օբեկտիվ լինելուց։ Ցանկական ստատիստիկան բռնում է միջին։ Մակեդոնիան բնակված է սլավոնները, (օրօնք ըստ մակեդոնական նարոդնիկների՝ չեն պատկանում ոչ սերբերին և ոչ բուլգարներին, այլ կազմում են մի ուրոյն խմբակցութիւն, այստեղից ծագում էր նրանց իդէալը՝ անկախ թագաւորութիւն), յոյներ, թիւրքեր, ալբանացիներ, բուսիններ, հայեր, հրէաներ, բոշաներ և այլն։ Թւական մեծութիւն են կազմում սլաւոնները, օրօնք ըստ դաւանանքի բաժանվում են ուղղափառների, կաթոլիկների և մահմեդականների։ Նրանց լեզուն սլավոնական մի բարբառ է, բուլգարական ծագումով, բայց սերբիացած։ Մակեդոնիայի նարոդնիկները այդ բարբառը համարում են ուրոյն լեզու, ազատ օրէնք ազդեցութիւնից։ Թիւրքիայի տիրապետութեան ժամանակ մակեդոնացիք իրանց անուանում էին բուլգարներ, բայց այդ արդէն այնպիսի բարբառով, որ սերբերէնին աւելի էր նման, քան բուլգարէնին։

Դասախօսը երկարօրէն վերլուծութեան է ենթարկում Մակեդոնիայի նարոդնիկների հայացքները, պատմում է Սանդանսկիի հետ ունեցած իր զրոյցների, Միլանի ծրագրի (Սերբիան դարձնել Աւստրիայի մի գաւառը) 1908 թ. Թիւրքական յեղափոխութեան առաջ բերած փոփոխութիւնների, Սանդանսկիի և Քեամիլ-փաշայի բարեկամութեան և դրա տխուր վախճանի և յուսախաբութեան մասին։ Այս բոլորը շատ հետաքրքրական են, բայց և շատ երկար են՝ այս յօդուածում մանրամասն յիշելու համար։ Դասախօսը պատմում է նոյնպէս իր հանդիպումները մակեդոնացի քահանայի, արհեստաւորների և բնակիչների հետ, և ընդգծում է այն հանգամանքը, որ 1907 թ. յեղափոխութիւնից յետոյ ազատութիւն է, բայց և անտեսական դժուարութիւններ են։ Սալոնիկը մինչև չէր բաժանված Մակեդոնիայից, ապրանքները անմիջապէս ստացվում էին կենտրոններից, իսկ յետոյ՝ Բելգրադի վրայով և այն էլ վատ տեսակի։ Այդ բանը գուշակել էր Սանդանսկին, որ և էական պայման էր դրել՝ ում ձեռքը ուզում է ընկնի Մակեդոնիան, միայն թէ չը Ջլատվի, չը բաժանվի մասերի, օրին կը հետևէ քայքայում ամեն տեսակի։

Դասախօսը յիշեցնում է 2 տարի առաջ Միլիկովի ասածները և գտնում է, որ նա ճշմարիտ է եղել՝ մեղադրելով Սերբիային ագահութեան մէջ։ Վերջում նա իրը եզրակացութիւն յայտնում է, որ արդէն կատարվել է մի յանցանք, Բուլգարիան չլատվել է և անցել է սերբերին. բայց երկու տարվայ ընթացքում սերբերը այնտեղ կատարել են նշանակալից կուլտուրական աշխատանքներ՝ դպրոցներ են բացել և այլն, այժմ մի նոր յանցանք կը լինի խլել Սերբիայի ձեռքից Մակեդոնիան եւ տալ մի ուրիշին, թէկուզ այդ լինի Բուլգարիան։

Դահլիճը ծափահարում է դասախօսին, որ խօսում էր համոզված և անկեղծ շեշտով։ Ժամանակի սուղ լինելու պատճառով զրոյց չէ լինում։

Մեծ դահլիճը լիքն էր լսողներով։ Գ. Զ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դրամա

Շաբաթ, հոկտ. 17-ին, ռուսաց «Տարատ» դրամատիկական խումբը նուիրեց իր երեկոն հանդուցեալ ռուս տաղանդաւոր դերասանուհի Մ. Գ. Սավինայի յիշատակին։

Ցերեկվայ ժամը 2½-ին Զինուորական տաճարում կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ հանդուցեալի համար՝ ներկայութեամբ բոլոր դերասանական և օպերային խմբերի, մամուլի ներկայացուցիչների և հասարակական գործիչների։

Երեկոյեան խումբը խաղաց «Տաղանդ և երկրպագուներ» պիէսը։ Խաղից առաջ, երբ վարագույրը բարձրացաւ, պատուանդանի վրա դրված Սավինայի մեծադիր պատկերի շուրջը բոլորված էր ամբողջ դերասանական խումբը, և արտիստ Ներատովը արտասանեց մի ճառ, որի մէջ խօսեց այն մեծ վշտի մասին, որով համակվել են ամենքը այն մտքից, թէ «այլ ևս չը կայ ռուսական թատրոնի գեղեցկագոյն թագուհին»։ Նա ասաց, որ Սավինան մի փարոս էր, որ նա մի դրօշակ էր, որի վրա ինքն արեգակը ուրախ ցոլացնում էր իր ճառագայթները։ Նրանից յետոյ խօսեց արտիստ Լիւբիմովը, արտասանելով մի ջերմ և ուժեղ ճառ։ Դերասանները դրին պատուանդանի վրա մի պսակ։

Ապա խաղացին պիէսը, որ ունեցաւ մեծ աջողութիւն։ Այս պիէսան այսօր կրկնվելու է դարձեալ ի յիշատակ Սավինայի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

ՊԵՏՐՕԳՐԱԴ, Վ. Տ.-ին.— «Մշակի» № 227-ում լոյս տեսած ձեր յօդուածի («Ինքնակոչ փրկիչներ») յետագայ մասերը չը կարողացանք լոյս ընծայել՝ մեզնից անկախ պատճառով։

ԲԱԳՈՒ, Դ. Անանունին.—«Մշակի» տարութիւնը ազգային հարցի լուծման մէջ» խորագրով ձեր յօդուածն անկարող ենք արպել՝ անկախ մեր կամքից։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նալասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Նուկիա, Զօրանոցի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ՍՊԱՍՈՒԹԻՒՆԵՐԸ

Բ. Ը. ՆԱՐՍԷՍԲԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Գ. ԱԶԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծանկահաս.։

Մ. Մ. ԲՈՆՇՄՈՎԻՉ—11—12 ժ. պանդխի կոկորդի և քթի հիւանդութ.։

Ը. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին, հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծանկահաս.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ. ՏԷՐ-ԳԻՐԳՈՐԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՆՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲՈՆՇՄՈՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Հրաւերները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նալասարդեան

1. 0—176

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՍԿԱԼԻ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ ԻՆՉՊԷՍ ԵՆ ՄԵՌՆՈՒՄ ՋԶԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ

Ջղային հիւանդները մեռնում են սրտաթուլութիւնից, ողնաշարի ուղեղի բորբոքումից, ուղեղի փափկանալուց, մասամբ խելագար դրութեան մէջ կամ ինքնասպանութեամբ յաճախ արբեցողութեան հետևանքներից, ալկոհոլիզմից, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ձգտում հիւանդի կողմից գինով խեղդելու հիւանդութեան երևան գալը։ Ջղային հիւանդութիւնների նշանները մի մէջի այլոց հետևեալներն են. դիւրագրգռութիւն, վատ տրամադրութիւն, վերջաւորութիւնների դողդողումն, սրտի թրթռոց, գլխի պտոյտ, անքնութիւն, վերջաւորութիւնների ընդարմացում կամ կաշուի ուրոյ մասերի անզգայութիւն, կաշուի սուր զգայութիւն, կսկծոցի, ձեռների և յօդերի ցաւեր, կրծքի ճնշումն, յիշողութեան թուլութիւն, ականջների աղմուկ, տարօրինակ ցանկութիւններ և այլն։ Աւելի ծանր դէպքերում պատահում են մտաւոր կեանքի խանգարումները։ Ջղային հիւանդութիւնները գլխի և ողնաշարի ուղեղային հիւանդութիւններ են։ Անչափ աշխատանքի, վշտի, հոգսի, վախի կամ ընդհանրապէս առողջապահութեան կանոնները խանգարելու պատճառով ջղային սիստէմը թուլանում է։ Յաճախ այդ թուլութիւնը ժառանգական բնոյթ է կրում։ Ուժասպառութեան այդ դրութիւնները պէտք է վերացնել սիստեմատիկ կերպով ամրացնելով ջղային սիստեմը, մասնակարելով օրգանիզմին այն սննդառատ նիւթը, որը անհրաժեշտ կը համարվի ջղերի համար։

Իսկ դա ֆոսֆորն է, որ տարիների ընթացքում աստիճանաբար պակասում է մարդանից, ուրեմն հարկաւոր է այդ պակասը լրացնել։

Պարիզի յայտնի բժիշկ Գլէզին երկար աշխատանքներից և փորձերից յետոյ աջողվել է պատրաստել միակ դեղը, որը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ ֆոսֆոր. այդ դեղը կոչվում է Ստիմուլոլ, որը վերականգնում է կորցրած երիտասարդութիւնը, առողջութիւնը և ընդհանուր ջղայնութիւնը և թուլութիւնը. արտասահմանի և Ռուսաստանի յայտնի պրոֆեսորները, բժիշկները և հիւանդները տուել են իրանց գովասանքը և շնորհակալութիւնը, և այժմ զանազան սանատորիաներում և հիւանդանոցներում բժշկում են հիւանդներին Պարիզի յայտնի բժիշկ Գլէզի հանճարեղ դեղով՝ Ստիմուլոլով... Ահա ինչ են գրում Ստիմուլոլի բժշկութեան մասին բժիշկները.

Իմ պրակտիկայի մէջ ցին «Ստիմուլոլով» բժշկումն անխարդ բոլոր դէպքերում ուշիկ է փայլուն արդիւնք։ Անհատական քայքայումների Ստիմուլոլի օգնութեամբ կլինիքական բժշկման կատարած մեր դէպքերը տանեակներից աւելի են, չը հաշուելով հիւանդանոց այցելող հիւանդներին։

Մեր դիտողութիւններով միշտ պատրաստ ենք Ձեզ ծառայելու։

«Ջղային ու ներքին հիւանդութիւնների կլինիկա»՝ Բժ. Ժակ Լերու-Սիմօ։

Իսկական Ստիմուլոլը պատրաստվում է Ֆրանսիայում (Պարիզում), ամեն մի դեղը ունի գործածման դրօշմը՝ Institut „D-r Calvet Paris". մի տուփը բաւական է, որ դուք զգաք նրա հրաշալի գործողութիւնը եւ դուք կը ստանաք ձեր ուզած եռանդը եւ առողջութիւնը. դեղերի հետ ուղարկվում է բոլոր եւրոպական և Ռուսաստանի պրոֆեսորների, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական խմբագրները։

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Тифлисское отдѣленіе Института доктора Кальве, Тифлисъ, Эриванск. площ., Пушкинская 3, верхній этажъ, отд. 11|1 (Խնդրում հասցէն գրել լրիւ, ինչպէս որ ռուսերէն գրված է)։ Մէկ տուփը արժէ 7 ռուբ., ճամբարհածախսով և վերադիր վճարով 50 կոպ. աւելի արժէ։ Ով ուղարկի 7 ր. փողը առաջուց լիովին, ճանապարհածախս չի վճարուի։

Վերադիր վճարով ուղարկվում է միայն 2 ր. 50 կ. կանխավճար ստանալուց յետոյ։

Գլխաւոր պահեստը ամբողջ Անդրկովկասի համար— Интернаціональное медико-фармацевтическое депо, Тифлисъ, Эриванск. пл., № 3.

(Հ.) 602. 10—6

ՊԱՏԱՒԱՄԱՄԲ ԾԱԽՎՈՒՄ Է

ԲԱԿԱԼԷՅՆԻ ԽԱՆՈՒԹ

մսի կրպակով և ամեն սարք ու կարգով Խանութն ունի լաւ եկամուտ։ Հասցէն՝ Մեժեվայա փող. № 38/40։

753. 1—1

Գիմնազիաւարտ օրիորդ,

որ աւարտել է նոյնպէս Collége Im. Conception-ը, պատրաստում է աշակերտուհիներ միջնակարգ դպրոցների համար։ Տալիս է դասեր բացի ռուսերէնից և հայերէնից նաև ֆրանսերէնից (պրակտիկա, թէորիա)։ Նոյնպէս նուրբ ձեռագործի դասեր արտասահմանի ընտիր ձեռագործներից։

Հասցէն, Ալէքսանդրովսկայա, № 34.

(օ. մ.) 751. 2—1

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

վաճառվում են հետեւեալ հրատարակութեանց սակաւաթիւ օրինակները

1) ՄՏԳԻ ՄՇԱԿԸ, Դր. Արծրունու գրական գործուն. 25-ամեակի առիթով, Խ. Մալումեանի, գ. 50 կ
2) АГРАРНЫЯ ПРОБЛЕММЫ, Ал. Калантаръ, գ. 10 կ
3) СУДЬБА ТАБАКОВОДСТВА НА ЧЕРНОМОРСК. ПОБЕРЕЖЬѢ, Ал. Калантаръ, գ. 15 կ
4) ԻՆՔՆԱԿՈՂ ԻՇԽԱՆԸ, Վիլհելմ Հաուֆի, թարգմ. օր. Վ. Տէր-Նիկողայոսեանցի, գ. 10 կ
5) АРМЯНСКАЯ ПОЭЗІЯ ВЪ ЛИЦѢ РАФАИЛА ПАТКАНЬЯНА, Гр. Чалхушьяна, գ. 50 կ
6) ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, բժ. Ա. Բուդուղեանի, գ. 05 կ
7) ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱԲՈՒԽ, Վ. Լուսկովիչի, գ. 06 կ
8) ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ ՇՂԷՂԲԻՆԻ, թարգմ. Խ. Մ-ի, գ. 05 կ
9) ԵՐԿՈՒ ՆՕՎԷԼԼԱ, Իւհանների Ա-հօյի, թարգմ. Լ. Բաբայեանի գ. 10 կ
10) ՍԻՍՏԵՄ, Մ. Հալբէի, և ԵՐ ՋԱՆԻԿ ԻՇԽԱՆԸ, Օ. Վիլդէի թարգմ. Լ. Բաբայեանի, գ. 15 կ
11) ՀԵՐՑԷՆ, Գ. Տէր-Ռուբինեանի, գ. 40 կ
12) ԴԺՈՒՌ, Ց. Զանիկեանի, II հատ., գ. 30 կ
13) СѢРА, Лекція д-ра А. Арцруни, գ. 20 կ

Այս գրքերից մի մի օրինակ պահանջողներին զեղչ է լինում 20%, ճանապարհածախսն էլ մեզ վրա։

Դիմել՝ Ред. газеты «МШАКЪ», Тифлисъ.

(8) 0—6

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ

ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ

(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառներով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կատարել մել տալ, կամ բրոշիւրներ շինել, ու այլու յանձնել։

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻՔՑ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐ ԳՆԵՐՈՎ։

Տելեֆոն № 67.

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.